



ԿԱՊՐ/ՎԱՅՐԿՅԱՆ

Կարեն Դարսյան

www.pinyaqhi.am 4 Ժամանակակից հայ գուշանուրյան հավատածությունները և նյութական համար

ԺԱՄԱՆԱԿԱԼԻՒԹԵՅԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԻՆՈՒԹՅՈՒՆ @ ԱԲԵՐՏՐՈՂԻ ՀԱՅԱՀ
www.puuuaghn.am

4

Խ ԿԱՊՐ/ՎԱՅՐ ԿԻՑԱՆ

Կարեն Ղարսյան

X FRAMES/SEC by Karen Karslyan

Երևան 2003

Հ ԿԱԴՐ/ՎԱՅՐԿՅԱՆ Կարեն Ղարսյան

Ց ա ն կ

Հ ԿԱԴՐ/ՎԱՅՐԿՅԱՆ.....
ԱՆՁՆԱԴՐՎԱԳՆԵՐ.....
NEW YORK.....
ԽՈՌՈՉՆԵՐ.....
ՆԱՑԻԱՏ.....
ՊՈԵՏԻ ԿԱՐԴԻՈԳՐԱՄՄԱՆ.....

Խմբագիրներ՝ Վիոլետ Գրիգորյան
Վարամ Մարտիրոսյան

Այս համարը ընդգրկում է միայն Կարեն Ղարսյանի ստեղծագործությունը:

Դրապարակումը հովանավորել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժինը:

X ԿԱԴՐ/ՎԱՅՐԿՅԱՆ

ReadMe:

«X Կադր/Վայրկյան» վեպը ֆրեյմների տեսությունը գրական չափաշխարհում վերարտադրելու փորձ է: Մարվին Մինսկու այս տեսությունը սկզբնապես նախատեսված էր հաշվիչ մեքենաներում արհեստական ինտելեկտի ձևավորման համար, ինչին որպես մոդել է ծառայել մարդկային ընկալունակ մտածողությունն իրականացնող անթիվ կաղապարների հիմնարար համակարգը: XX դարի երկրորդ կեսից սկզբնավորվում է մարդուց համակարգիչ ուղղորդվածությամբ տրանսֆեր, այն է՝ համակարգչի ինտենսիվ անտրոպոնորֆիզացիա: Արդեն այսօր պոստպոստմոդեռնիստական կնքված ժամանակաշրջանը վկայակոչում է այդ կլինավորման հսկայական պահանջարկ ունեցող արդյունքների մասին: Այդ միջոցին, սակայն, զարգանալով մարդ \leftrightarrow համակարգիչ դիալոգիզմի՝ տրանսֆերը գնալով նախանշում է հակառակ պրոցես՝ մարդու կոմպյուտերիզացիա: Այսինքն՝ հիմնարար դատողության սկզբունքների փոխանցում գրեթե անտրոպոնորֆիզացված համակարգչից դեպի մարդը. Վերջինիս մեջ արհեստական ինտելեկտի տարրերի ներմուծում, շատ դեպքերում փոխարինման կարգով:

Այժմյան համակարգիչ \rightarrow մարդ դիկտատուրայի պայմաններում տվյալ ստեղծագործությունը ներարկում է մարդու վավերական ֆրեյմային դատողության սոցիալիզացիայի, գեներացիայի և ռեգեներացիայի բազմաշերտ դիսկուրս:

Ֆրեյմների հոսք:

Սի խոսքով. սա մարդու անտրոպոնորֆիզացման փորձ է:

Փորձում էինք այնքան վատ անել, որ ստացվեց՝ լավ:

Мотор.

Кадр x

Дубль 132003

Камера!

Դո
Ծիրամի ակոս
կզակին
դեմքի այտերին
մեկական մանկական տարիքի
սեռական շրթունք
լեզվիս համար գրպանիկներ
մի քիչ սպասես անուշիկս
խաղամ երևի էլ հետ չգամ
Կախարդական անհամբերությամբ
չափազանցնել
ու բուն նյութից
հեռանալ
փախնել ու
ինքնախաբեռությամբ զբաղվել
Արվեստը պիտի
չքանա վերանա
ինչ եղել չի եղել
Բայց ինչո՞ւ
Չպրծնի՛ ուղղակի չլինի
Բավականաչափ ուժեղ չենք
այդպես անելու համար
Ոչ էլ բավականաչափ թույլ
Միջակություններ
Հոգմեցուցիչ
Փիլիսոփաներ
Հոգեբաններ
Գլուխգործոցներ
Գլուխգովաններ
Քաքական գործիչներ
Հոգևոր ծայրեր
տաղտկալի յոգեր
ձեռնունայն ձեռնարկատերեր
ծակեր
Փառամոլներ
Եսասերներ

Չնչինություններ
Ոչնչություններ
Որ մի բան են արել միայն
ՉԵՆ ԱՐԴԱՐՍՐԵԼ
Երեք հազարամյակներ շարունակ
Անհաշվելի տիրաժներով
Յիսուսին խաչող քրիստոնյաներ
Խաչված Քրիստոս կախված
Շարժվող պատերից
Անշարժ պարանոցներից
ՓԱԽԽԽԽՆԵԼՈՎՈՆՊԵԼ
Աստված է այն ինչ
չի եղել չկա չի լինելու

Ա Ս Տ Վ Ա Ծ
ԻՄ
Ա Ն Դ Ա Ռ
Ն Ա Լ Ի
Է
ԷԼ ԱՍՏՎԱԾ ՀԵՆՔ

Ուրբաթ 13 ապրիլ 2001

մի անգամ ճիշն իր էրոտիկ երազներից մեկում տեսել էր ինչպես է երեկոյան կողմ
մութն ընկնելուն պես Լեզբոգի կարմիր կտուրը վերածվում մի հսկայական
էլեկտրական լամպի ու հրավառ կարմիր լուս արձակում շուրջը մինչ այնտեղ ցերեկը
սովորող աղջոցիկներից ամենահամովները ձեռքներին կարմիր կրակ շնչող մոմերով
նրան տանում են շենքի ներսն ու վերջակետի փոխարեն խորհրդավոր ժպտում ճիժը
վեր թռավ ու զայրույթով նկատեց որ հաստատ ուշանալու է օֆ նորից վեր կենալ
շատերն էին այդ առավոտ արդեն ոչ միայն վեր կացել այլ նաև մտել օրվա փուչ
հորձանուտի մեջ խորասուզված իր ընկերոջն այստեղ անհամբեր սպասող
երիտասարդը մեզ արդեն կիսածանոթ հումանիստը¹ թեև ուղիղ մեկ օր առաջ նա
վերջին անգամ ոտք դրեց այս համալսարան որպես ուսանող հումանիստը
անհամեմատ հաճախ էր շփում ունենում դեկորատիվ սերի ներկայացուցիչների հետ
և՝ ստիպված և՝ հակառակը և՝ զուգարաններում և՝ մենակ և՝ երազում և՝ բոլոր այլ
միջոցներով գալով ոչ վերջնական եզրակացության որ կանայք նա գլուխը վեր
բարձրացրեց տեսավ անոր շինության կարմիր կտուրը որը տարակուսանքով իրեն էր
նայում ու գանգատվում իր արագընթաց ժանգոտումից

Լեզբոգի մուտքի մեջ դրան վրա գրություն կար ՄՈՒՏՔԸ ՄԻԱՅՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ
ՏՈՍՍԵՐՈՎ չափից ավելի վստահելով տրամաբանությանը կնամոլ շատ ուսանող ու ոչ
ուսանող երիտասարդներ և ոչ երիտասարդներ փորձում էին մուտքից հանգիստ ներս
խցկել իրենց բուհերի (Երբեմն նախկին) ուսանողականներով նրանք սակայն ամենա
դուրս էին շպրտվում գորգոռացող պառավ պահակների կողմից թերևս կանացի
տրամաբանության նմուշ մաթեմատիկոսներ ֆիզիկոսներ աստղագետներ
ծրագրառողներ բնատգետներ երաժիշտներ նկախչներ սպորտսմեններ կամ ռոքեր-
բառերներ կամ ուղղակի անբան ռաբիզներ² տուրիստներ և շատ այլ երկրաքերներ

¹ այսպես էին կոչում հումանիտար գիտություններ ուսումնասիրող ուսանողներին

² Նրանք չափից դուրս են մտածում ստերեոտիպներով իրենք իրենց մասին անգամ ունեն ծայրահեղ ստերեոտիպային կարծիք նրանց կարելի է անձաշակ ճշացող ու միատեսակ հագուստից ճանաչել քաղաքի բնակչության այն մեծապես գերակշռող մասն են կազմում որը հասարակության մեջ անհատական առանձնահատկությունների դրսևորմաներ համահարթող կուռ գործոն է նրանց գրի չառնված ուսմունքի մեջ (ֆիլիստերներն առանձնանում են դրա կատարյալ բացակայությամբ) շատ դեպքերում ծաղրանքի է առնվում ուսումը (թեև քիչ չեն պեվդուսանող անգամ պեվդոինտելիգենտուալ դասախոս ռաբիզները որոնք ժամանակի ընթացքում վերածվում են կվազիռաբիզների և մասնակիորեն մեկուսացվում նրանց շարքերից) և քննադատվում հայացքների ազատությունը պաշտելով ավանդականությունը բորբոսնած իբրազգայինը սակայն նրանք համոզված են որ իրենց ձեռքում է գտնվում բացարձակ ճշմարտությունը և դրանից ելմելով կարծում որ ազատամտությունը նշան է բացարձակ ճշմարտության չիմացության որի հաշվով տարածայնություններ նրանց միջև գրեթե չեն

Տրամադրություն անգամ չկա իր գրավչության հաճախելիության տեսակետից անտեղի համեմատություններ կատարելու ասենք լոնդոնյան Մադամ Տյուս թանգարանի հետ մանավանդ որ ինչ-որ մեկն այժմ թերևս քթի մեջ քոր զգում ու մատ էլ չասած ձեռք չունի այն քչփորելու հանար արևը ջանաբար քաղաքն էր թխում իսկ թխվածքի անունը Երևան որտեղ գտնվող հարյուրավոր ուսումնական հաստատություններից համենայն դեպս այս մեկը տարբեր տարիների ու ամիսների առավելագույնս է տվել Միսս Յայաստաններ և անգամ Միսս Կարեն Ղարսյաններ 6-7 րոպե ուշացումով ուրվագծվում է հումանիստի ընկեր ծիժը³ ո՞ւր ես կներես սենց-նենց իսկ երեկ մինուս 16-րդ կադրում էի երկար լռվել գործ-մործ լավ ինչպես ներս մտնել ու մինչ նրանք տարբերակներ էին առաջարկում միմյանց շուրջը զվրնող կանայք ոտից գլուխ զննում էին այդ երկուսին որոնք իրենց տղամարդկային գրավչությամբ ու կրթվածությամբ բավականին հույսեր էին ներշնչում ծերուկ դասախոսներին քաղաքի երակներում էլեկտրականություն քաղաքը պատված արյամբ քաղաքաբնակների երակներում արյուն քաղաքաբնակները պատված էլեկտրականությամբ վառ լուսավորված արտասահմանյան գրականության մարդաշատ ամբիոնում իր լուսանկարը հուսակտուր փնտրելիս նա լսեց ամբիոնի վարիչի հեռախոսազանգաբարո խոսքերը թե հնարավոր է ինչ-որ աղջիկներ են այն փախցրել ինչին հումանիստը պատասխանել էր թե լավ է իր առնանդամը չեն գողացել ներկա գտնվող դասախոսներից հիսունին մոտ կենսուրախ *ը հրճվում էր այն հանգամանքից որ դեռևս ոչինչ կորած չէ և նրա բզկտված բերանի խորքում պսպղացին բազմակետածն երեք ոսկե սեղանատամներն ու թաքնվեցին ծխացող հաստլիկ գլանակի կուլիսներում մի քանի օր անց նման մի գլանակով իրեն պայթեցրել էր մի բենզալցակայանի հետ միասին գիշերով

Արևի տակ համալսարանի առջև և ընկերների շուրջը չտեսնված աղմուկ էր տիրում աշխույժ զրույցները միախառնվել էին վերածվել բոլորին բոլորովին անհասկանալի մի լեզվի կամա թե ակամա ուշադրությունը սևեռվում էր ժեստերի լեզվավարանության յուրօրինակ ճյուղի Ֆեմալանի (Female Sign Language) ուսանողուհիների անընդմեջ ծիծիկույացիաների տուտուգիկույացիների վրա Ӧ այդ հեռակառավարման վահանակները ունանք թեև նստած մարտկոցներով ծիժն

Լինում կամ հարթվում են վերոնշյալ ձեռքի ներքոնշյալ ոտքերի կամ առհասարակ չնշված բայց ակնարկված օրգանների ու իրերի միջոցով իսկ նրանց «հոգևոր հայրերը» հիմնականում ժամանակին բազմից դատապարտվածները պատրաստ են ամեն գնով դարեր շարունակ կարկառուն փիլիսոփաների անարդյունք մաքառումներով այդքան վիճակած ճիշտը ձեզ հրամցնել ահա թե որտեղ է այն Ավելի երջանիկ հանգամանքը Շտապեցեք տեսակցության հարուստ ընտրության պայմաններում այլընտրանք չկա³ ճշգրիտ գիտություններ ուսումնասիրող ուսանողներ

ավելի անգթորեն էր տաճքվում թրջվում իր ուշացման պատճառով քան սպասել ատող հումանիստը նախկին ուսանողը վերջինս պատրաստվում էր ասպիրանտական քննությունների և ներս թափանցելու պլանն արդեն մշակել էր ուշ էր դասախոսությունը շուտով կսկսվի մնում էր գործել

Ստացվեց

Ներսում ճիժը գուսապ հետևում էր անցուդարձին նա նոր հասկացավ որ դրսում կանգնած աղջիկները տղա կպցնելու ավելի չնչին հույս ունեցողներն էին ներսում դաշտանահոտերի և անտիվաճակիրանտ օծանելիքների տհաճ խառնուրդ էր ի զարմանս ճիժի տեղ-տեղ նրա աչքին էին զալիս կուրացուցիչ դիզայններով ք/փ/այլող նվերների տուփեր «Լի էրոգեն գոտիներով!» որոնցից ոմանց հետ հումանիստը ծանոթացրեց ճիժին «Վերջը ստացվեց Տես ու թոի փողի հետևից» ասաց հումանիստին մոտեցած մի կենսուրախ աղջիկ ու ցույց տվեց իրեն իր քաքոտ հետույքը ձեռքերով առանց թղթի սրբելիս պատկերող լուսանկարը դեմքը տարորոշելի էր ինչպես և պայմանավորվել էին նա պահանջեց իր արդարացիորեն վաստակած գրազը \$50 հումանիստը հազիվ տեղը բերեց թե ինչ գրազի մասին է գնում խոսքը նա աղոտ կերպով մտաբերեց մոտ 5 տարի առաջ կնքված այդ գրազը դեռ նոր էր ընդունվել համալսարան թեթևամիտ մի լակոտ էր կասկած էր հայտնել թե այդ աղջիկը նման բան չի անի թեև անկոմալեքս է ծևանում ախր դա շատ վաղուց էր հիմա հումանիստին այսքան անգամ չի հետաքրքրում ով կանի ով չի անի հետո կանի և այլն «Դե մի էղքան ժամանակ էլ դու սպասի մինչև 50 բազոդ տամ» վրդովվեց հումանիստն ու թողեց գնաց աղջիկն այդպես էլ մնաց իր քաքոտ դիմանկարը մատների արանքում ու մի արցունք էլ թարթիչների արանքում էր դղրդում աշխույժ միջանցքները միմյանցից բաժանող ու դեպի աստիճաններ տանող գրաֆիտիի զոհ կամարներից մեկի մոտ անհաջող լուսավորության տակ ֆազապուրծ ճիժին ընկերն իր ծանոթացրեց մի աղջկա հետ որը եզակի համբավ էր վայելում նույնքան վարպետությամբ ինչպես ոտքերով այդ աղջիկը կարողանում էր քայլել իր վիթսարի ծիծիկներով վազել և լավ վարձատրման դեպքում կոտրված ապակիների վրա ռոքնոոլ կպարեր միայն թե գոգոիր այդ կրծքերն ու կողքի քաշվիր հումանիստն ուղղակի ողջ ուժով դեպի լսարան էր քարշ տալիս ճիժին որի մոտ ամորձիների շրջանում սպանիչ ցավ էր սկսվել քիչ առաջ որոշ աղջիկների ձեռքերը ծանոթանալու ժամանակ սեղմելուց

Ակսվել էր նաև դասախոսությունը կլանված ունկնդրում լսում ենք ջոն էդըմս տրատրատրա հենրի քառ ահա թե չարլզ այվահ մոտ ինչպես ստացվեց քոփլենդից մի կտոր ֆելդման ստրավիսկի քեյջ բլա բլա բլա

- You must be tired I guess or
- Նո նո վի հեվ թայմ!
- Sorry?
- Վի հև անլինիթիդ թայմ
- Haha ohk

Ակադեմիկոսի պատասխաններից շոյված ու Յայաստանում իր համար աննախադեա ուշադրության կենտրոնում գտնվող միջին տարիքի ամերիկացի John S Cheeks շարունակում է իր դասախոսությունը գլուխ չհանող ճիժին ժամանակ առ ժամանակ թարգմանելիս հումանիստը քիչ շեղող շշուկ էր տարածում լսարանում սակայն դասախոսող այս բարեհամբույր Սանտա Կլաուտը⁴ հազիվ էր հանդուրժում նամանավանդ երբ միստր Քեյջի տարօրինակությունների մասին էր հափշտակված պերճախոսում⁵ prepared pianoյի ելևէջների ներքո բայցևայնպես մի դասախոսական սկզբունք ուներ այն է կարգապահությանը վերաբերող դիտողության փոխարեն նա շրջվում էր մեջքով դեպի լսողները ու տռում էր և այդ մեկ տեղը բավական էր կարգապահություն ապահովելու համար մինչև դասընթացների վերջ ու թեև ուսանողները բերանները փակելու փոխարեն քթներն էին փակում այնուամենայնիվ այլևս ամենևին ցանկություն չէին ցուցաբերում կրկին ենթարկվելու նմանատիպ էքսպերիմենտների «Ինչ ասե՞ց» շշուկով հարցնում է ճիժը «Սսսսսս չասեց տռեց» շորի տակից ջղային շշուկով պատասխանեց հումանիստը «Ինչ տռե՞ց» անգթորեն շարունակում էր հետաքրքրվել ահազին դոզաներով անգլերեն լեզվից ու իգական սեռից շշկոված ճիժը «ՍՍՍՍՍՍՍՍ» լուր է դասախոսությունը կարծես ավարտվեց մի փոքր դատարկ հարց ու պատասխանից և հայտարարություն բոլորը հրավիրված են Կոմիտասի անվան կոնսերվատորիա ապրիլի 22-ին կենդանի կատարումներ ունկնդրելու! Զը-րի Բուրն ու շռայլ ծափահարություններ (իսկ որոշ աղջիկների մոտ անգամ հաղթահարվեց օդային սեռական շրթհամբույրների բարդութը անուսնանալ հետն ու չվել Ամերիկա) դռնից անդին կանգնած որոշ պուցանողուիկներ տարակույս հայացքներ են փոխանակում այնուամենայնիվ արժանվույնս հատուցեց նրան պատճառած անհանգստության համար հումանիստն իր ծափահարություններով ու

⁴ ամերիկյան կառավարությունը սրտառուչ մտահոգությանը Խորհրդային Միության փլուզումից հետո վերջինիս հսկայական տարածքներ անվերջ Սանտակլաուսներ էր առաքում

⁵ նոր մատներս պատահականորեն հայտնաբերեցին որ պ-ի ու ճ-ի միջինը զ-ն է

ատամնաժայիտներով Բրավո բռավո մաեստրո լսվում էին գըրե՛յթ հումանիստի հայացքը Բրավո բռավո մաեստրո լսվում էին զ հումանիստի հայացքը պատահաբար ընկավ Բրավո բռա՛ ընկերոջ վրա WoW ում մտքով անցներ Բրա՛ ճիժի աչքերի սպիտակուցները բնից դուրս էին ցցվել և ի տարբերություն ջրիկ Զին քերիի դերը խաղացած Դիմակին դրության լավ փքվելով վերածվել էին կնոջ լքոտ կրծքերի իսկ թիբերը գրգռված կարծր պտուկների հումանիստն ինչ-որ տեղ սովոր էր դրան ու ենթագիտակցորեն արդեն իսկ ակնկալում էր նման վախճան սակայն մտահոգողը ընկերոջն իբրև կույրի ուղեկցելն էր կանայք գերազանց գիտակցում են իրենց մարմնական կողիրների դերը և դրանք ի տարբերություն վախկոտ խաղաթղթամոլների ռիսկով ցուցադրում են երբ մտքներին փշի կամ չփշի խառը անցավ հուսահատ հումանիստի մտքով ԱՈՒ՝ հումանիստի ձայնի ուղղությամբ թեքվելով ինքնամոռացության մեջ ճիշճ իր կաթկրող լեզուն դուրս էր հանել ու աննկուն կրօռվ փորձում էր քսել այն իր «թիբերից» որևէ որևէ մեկին առաջին հայացքից թվաց գոռծն անհուսալի է Սակայն փառք աստծո մինչ լսարանը գնալով երկու ընկերների նկատմամբ անտարբեր դատարկվում էր Cheeks-ի հետքերով ավելի ու ավելի էր զգացվում ինչպես են կամաց-կամաց հարթվում կարկամած ճիժի ֆիզիկական պրոբլեմները հետագայում նա ախորժալուր հնարներով պատմում էր որ իրեն այդ պահին

Բոլոր (անտի)ճանապարհները (անտի)տանում են (անտի)տուն
Ֆիզի(ոլոգի)կական մարմինների քանակի բազմապատկումը ուղիղ համեմատական է հոգևորի նվազմանը և հակառակը հակահակառակը և ընդհակառակը

Վաղ մանկության հասակում կոճի զույգ թելերը մի ծայրից կապած օդում շորորացող մայրիկիս կապտած պտուկներին իսկ մյուս ծայրը մի ձեռքիս մեջ բռնած ես զբոսնում էի բառադատարկաբանության օվկիանոսների վրայով թռչկավազվզող աչքերով մինչև խեղճ հայրս մի տեղից ինձ համար փուչիկի փող ճարեր

**մտնենք համերգ թատրոն կինո հեռուստատեսություն թերթեր
թանգարան բանտ ռադիո հիվանդանոց լաբորատորիա
գրադարան գործարան աստղադիտարան գժանոց ինտերնետ**

**մեջս պոպորի կեղևի մեջ տեսնենք էլ ինչ կարող է մարդու մտքով
անգամ չանցնել գնանք քնենք չքնենք գնանք**

ԳՐԱՊԱՐԵՍՏԱՄԱՍԵՐ

Բարև ձեզ կներեք ստորակետ ունե՞ք

Տարել են մի քիչ ուշ հանդիպեք

Բութ վերջակետ...

Ծ այ դա վերջին բազմակետն էր

Գրախանութներ մտան ու ժամանակները խառնվեցին իրար սնահավատ ընկերներն իրար կորցրեցին ճիժն առաջին գիրքն աչքերը փակ շոշափելով ընտրեց Նահապետ Քուչակ գրքում պատահական էջում 66-րդ հայրենը բացեց (666-րդը ցավոք չգտավ)

Մահալօքս ի վար կուգի
 նայ տեսայ լաթեր լրւացած
 ի յայն լաթերուն միջին
 լրւացած շապիկ մ'եր փըռած
 իր կուրծքն էր դալեն քաշած
 ու թեզնիքն էր մատնեհարած
 Ասոր տէրն ի յիս պիտէր
 զիս հազար դեկան դա գմած

Բան չհասկացավ ճիժը նրա բախտից կար բավականաչափ քանակությամբ
ռուսալեզու գրականություն ինչքան քեֆդ տա զգացե՞ք ձեզ ինչպես մթնոլորտը
Փարազանովի տուն-թանգարանում ասաց նրանց ճանաչող կինոսեր
գրավաճառողուիհին կանգնեքանգնեgradaranner@ karox ու zanaxetsnel Asttso tapur
tex@ տեղեր կան այնքան որքան կան տեղի հավակնորդներ թափուր տեղեր ավաղ
չկան աշխարհում չկա ոչինչ բացի տարբերություններից անգլուխ ոտքերը վեր են
կենում ծաղիկը նվեր է ինքն իրեն վիսչը ֆօռմը բլըժէնստվը պը եպիկու մարդու
Իմացություն նրա հնարավորություններն ու միջոցները ջերմոցի ծփացող
ապակիների ներքո նա խենթացած հոտոտում էր նրա ողջ մարմինն ուժգնորեն
ներշնչելով նրա ողջ մարմնով մեկ ցանած մարիխուանան հոտոտելիս նրա
իրեշտակային դեմքին հասնելով նա կորցնում էր հսկողությունն ու շնչահեղձության

չափ հոտոտում և քթանցքները հանկարծ ուռեցին նրանց մեջ էին խցկվել ղժժացող իր նորապսակ կնոջ գույգ աչքերը հումանիստը անցավ այլ գրքի (Երևի քաղվածքների հետքերով) թեև միսիս ուռեցերսը դա նկատեց այս երկիրը լավն է ես ինքս էլ լավն եմ և մենք բոլորս լավագույնն ենք դու ապուշ ես աշխարհի երեսին նմանը տրաքես չես գտնի ուզում իրեն նոր զգեստ է գմել ու պտտվում է սիրեցյալի դեմք ինչպես երկիրն արևի շուրջ ինչպես մանուալ ֆոլկուսն օբյեկտի շուրջ այդ կինն ինձ ասաց ամենայն ամենայն բարիքի փոխարեն Իմացության ճանապարհին մենք կորցնում ենք զարմանալու ունակությունը փոխարենը զարմանալով մեզ համար նորանոր երևույթներով պատկերացրեք թե դուք քսանիին տարեկան եք և ձեր ձեռքերում կա մի դյուժին վլոձին – ինչպե՞ս կվարվեիք նրանց հետ che sera sera ՆՍ սկսեց ծիծաղել և կորցրեց իր ատամնաշարերի հաշիվը ես ցնցվեցի ասես ձյուն էր մաղում ամառվա կեսին ՆՍ սկսեց ծիծաղել և կորցրեց իր ատամնաշարերի հաշիվը ՅԱ սկսեց ծիծաղել և կորցրեց իր ատամնաշարերի ՅԱ սկսեց ծիծաղել և կորցրեց իր ատամնաշարերի հաշիվը ես ցնցուղվեցի ասես Ֆորումի սյուներն էին տապալթափալվալվում I dont think theyve heard of anything that wasnt on TV less than a week ago ղժժժբբզբզզ տան delights not me սպասի գալիս եմ ոչ ոչ աստված sui appetens alieni profusus²¹ խոհականությամբ կարծես մի աստված սու ապետս ալին պրոֆուս

հաղորդակցությունը առողջություն է հաղորդակցությունը երջանկություն
Հաղորդակցություն մոբմոբաց նա muddled Armenians and Turks սահմանել ասել է թե սահմանափակել ISBN 0-0000-0000-0 խորտակվող նավից կցված սավառնող մարդիկ թո՞ղ լինեն ավելի շատ օվկիանոսներ ավելի շատ բարձունքներ ավելի շատ
պատերազմներ ավելի շատ եղեններ միանգամայն ծիշտ է իսկ ես դույզն-ինչ չեմ
մտածում թե ինձ ինչ ես գալիս – կին քույր մորաքույր հայր կամ մայր – կամ projdite
mimo nass i prostite nam nasche stschartje Պատասխանեք հարցերին 1) Qui est Lucie?
Երևի «Господа присяжные заседатели я здесь человек свежий» <DIR><Aname=1></
A><H₂O>I</H₂O></DIR> անցյալի արվեստը արվեստ «չէ» այն արվեստ «էր» այն մեր
մեջ առաջացնում է «հնեաբանականի» էմոցիաներ արվեստը չունի ո՞չ ապագա ո՞չ
անցյալ հետևաբար այն հար այսօրեական է /PRE></PRE></BOD Y></HTML> Ի ի ա
î÷åâèäíî íåîåèòååìà Զծոյ հոկոյ հերո? (Пересекает время) Ա՞խ թղթե մարդիկ
ի՞նչ են առանց ձեզ հույժ մարդիկ – քոսոտ հումանոիդներ կամ իըմ հակառակը
մտածեց հումանիստը երբեք չէր հավատում մենախոսության գոյությանը արա դե
լա՛վ էս ճանշերը արդեն ճիժն իր աջ ականջը դրել էր մի գրքի վրա ու լսում էր հենց այդ
պահին ինչ էլ լսեր կլիներ ամենաօբյեկտիվ կարծիքը տվյալ գրքի մասին նա
համառեն ձգտում էր դեպի այն ամենն ինչը քիչ թե շատ հեռու էր իր ընտրած
մասնագիտությունից հոր հետքերի հոտն էր գալիս սակայն ավելի էր խորացել այդ

ընտրության մեջ բանակից ազատվելու համար ասպիրանտուրայից չեն տանում ճիժը նաև առանձնահատուկ սեր էր տածում իր վրա նստող որոշ միջատների նկատմամբ և հանուն զատիկների ու թիթեռնիկների հյուրընկալելուն ստիպված հանդուրժում էր ամենատարբեր ինսեկտա նոն գրատաների ներկայությունն իր մարմնի վրա իսկ հենց հետևանքում տառապի ալերգիայով բացատրությունը դրա միշտ իր գրպանում կա ու կա իրեն զգում է այդ պահին ինչպես Կարմիր վարդը դաշտի միջին համոզված որ աստված իրեն լսել է և զատիկների ու թիթեռնիկների ու դաշտերում ծաղիկ հավաքողների համար պայմաններ ստեղծել

Ոնգեղջուր արևարտացոլքը հոսում էր մակերևույթով

ճահճի (ճահճի գունալուծումը – իմպրեսիոնիստական արև ու երկինք) ու ընդհատակյա սուզվում էր ստվերն արևի հանգստավայրեր պանսիոնատներ մորեխ աստիգմատիզմով տառապող արև նայում է երկրի վրա երկինք-խոշորացույցի միջով ու հրարիր հրիկիզմով ամառըրը

Մաշտոցի պողոտայի վրա գտնվող գրախանութից փսխվելիս

շատախոսելով թեքվեցին Արամի փողոցի ուղղությամբ

«Պոկվես երբ ուր ուզես ամեն հոգս մեզ վրա»

Տուն ուղարկող կանգառն արդեն մոտ էր մի քանի քայլ և ընգերիների միմյանց ականջներում արդարանալը վերջ չէր գտնում քտքտ քտկտ քտքտ կտ քտ կտ (գետնին 10 դրամի մի կեսը) ճիժը ժամանակ առ ժամանակ կարճատև լրությունները լցնում էր քթի տակ «Հայկական ծծերը գրավիտացիայի չեն ենթարկվում» երգը մռնացնելով իսկ հումանիստն իր ծխախոտի ծովին էր բաց թողնում ինչպես ջրի մեջ ձուկն ու իր պղպջակների հեռվում նեղացող փողոց

Քաղաքի կենտրոնական հրապարակում գտնվող Նոյյան Տապան թանկ գրախանութում կային շատ գայթակղիչ մեծ ու փոքր թանկ գրքեր որոնք պաշարել էին հաճախորդների թանկարժեք ժամանակն ու իրենց հարյուրավոր թղթե լեզուները շրշեցնելով կախարդում էին միֆական դևերի պես հաճախորդներից մեկը համոզվեց որ մարդիկ ողղակի թե անուղղակի խայթված միջին տարիքի ցիլինդրավոր մեկը գրախանութի խոր անկյուններից մեկում բացած ***ի շատ լուրջ հաստափոր գիրքը պրատուն հայացք ձգելով մեջտեղի էցերին նայեց նայեց նայեց առանց կարդալու մռնացավ ատամները սեղմեց աչքերը փակեց փոքրացած բբերը վազվացին առաջին անգամ բացվող այդ փքուն գրքի միջտեղում մի պատահականորեն ընտրած տող մասնակի բացահայտելով նա սահեց ընկավ էջակրծերի միջև փոքրացած ունքերը վազվացին հետ մնացած տողերը թերթեց մաքուր ճերմակ գույգ էջ տակի

կենտրոնական մասում էջապտուկները (տարիներ որևէ կնոջ քնքանքներից հեռու) աջ ձեռքը դուրս հանեց իր լորձոտ անդամն ու թոջված կաշին սահեց հետ

ինքնամոռաց ինտենսիվությամբ առաջ այլոք զբաղված էին գրքերից քաղած իրենց մտազուգորդումները մարսելով սերմնազեղման առաջին կաթիլները պարուրածն դուրս շատրվանեցին անհասցե մի քանի գրքի կող հաջորդներն արդեն ծառայեցին որպես էջանշան (պատկերազարդումը շուտով) ժամը՝ տեսախցիկը ֆիքսել էր նրան սպասում էին ելքի մոտ

Եղր մի քանի րոպե անց բանից անտեղյակ ճիծն ու հումանիստը ոտք դրեցին այդ գրախանութ նրանք զգալի ու բերկրալից վերելք ապրեցին այստեղ գրքերի կողքին թվով գրեթե գրքերի չափ մարդ

Նոյյան Տապան թանկարժեք գրախանութում ասեղ գցելու տեղ չկար ու ձեռնունայն դուրս գալուն պես ճանապարհը ավտոմեքենաների անդադար վազվզութի պատճառով դեռ չանցած ճիծի ու հումանիստի առջև հայտնվեց մի շլացուցիչ քայլող էակ նրանք կանգնեցին 4 վայրկյանանոց պանորամա Նրա մակրոսեքսուալ զգեստը նրանք իրարից անկախ չնչին տարբերությամբ ալիսայավարի վերծանեցին «Կեր ինձ»/«Խմիր ինձ» միմյանց այդ մասին ինքնաբերաբար ընկան հետևից crawling spider արտաքրուստ հանգիստ ներքուստ շտապող բիզնեսմենի փողկապի պես նրանք արագ անցան նրան հետևից զննող գրախանութցիներին ճիծն առաջ էր ընկել բավականին ու մոտենում էր Չթօքեկտին դեռ չհասած բայց արդեն կափ-կարմրած անտարորոշելիորեն ինչ-որ փակ բեկորային կոտրվածքով բարև նետեց աղջկա հասցեին բայց օբյեկտը կանգ չառավ թեև իր պրոֆիլը դեպի ճիծը հազիվ թեքելով անգլերեն ասաց այն մէրիդ թե ինչ ու արագացրեց իր Քայլերը հո քայլափոխեր չէին պրոֆիլից տոտիկների միջև քեռփսի բուրգեր էին!

ԱՅԱՌ (= նրան ճանաչեց հումանիստը դեմքի այն մոտ 1/10 մասից որ ի պատասխան ցուցադրվել էր ու հանկարծ վրդովվեց իր վաղեմի ծանոթի նման անողջունելի վերաբերմունքից առաջ ընկավ ու սկսեց իսկ սա շարունակեց ավելի կոպիտ տոնով անգելերեն իրանայելով որ ռեխը փակի «Ի՞նչ ուզում ես արա՛ տեղը չի՛ բերում (Փոխվել եմ)» հաստա՞տ

կենտրոնական մաս Հանրապետության Հրապարակ սըր ժողովուրդ իր ամբիոնից մեկին նկատեց ներկայացում նրանք ովքեր իրենց գրուցակցին մինչ այդ բան չէին գտնում ասելու նրանց բառակռվից ոգևորվեցին ոմանք բաց էին թողնում իրենց ավտոբուսը օ համընդիհանուր մի հայացք հումանիստի ու նրա վաղեմի ծանոթի միջև շարունակվող երկխոսությունն արդեն – ամենուրեքյան ինտերնետի տվյալներով – դարձել էր ամենաաննեցբերելի լկտիության խորհրդանիշը ողջ աշխարհով մեկ փողոցն անցան ու արդեն նրանց բաժանման պահին (ընկնել-մնկնել խորհրդանիշ-

0

0

մորհրդանիշ) սրընթաց երկրորդ տեղ իջեցրին իրար հետ վիճող իտալացի ինչ-որ հոր և որդու

Աղջիկը կորավ հետիոտնախառը ինչպես արյունն իր բարձրօրակ տամպօնի մեջ

I hate Armenians մտաբերեց հումանիստը Մէրիէնի մշտակա հոգեբանական ֆրեյմը շունչ քաշելիս հումանիստը այնքան էր նյարդայնացել որ ձեռքը անշարժ վեր էր պահել (ինտերնետային ցանցն էր նրա այդ ձեռքը բարձրացրել ի հաղթանակ տարած քֆուրուսլինգի համաշխարհային առաջնությունում) ցած անկյունից 2-3 վայրկյան սակայն նրա միտքն այլ բանով էր գրաղված նա այն հույսով էր որ անեզր մեքենաներն իրենց գոգավոր գունավոր ապակիներով փողոցի մյուս կողմում շվարած ու ամոթից կարմրած ճիշի մոտ իր ձեռքի կանչող թափահարության պատրանքը կստեղծեն ու նա կֆայմի անցնել փողոցն ու միանալ իրեն այսպես թե այնպես արևակնոցավոր անցորդներից մեկը մոտեցավ և ձեռնափուկ երկու անգամ ուժեղ ապտակելով ջղածից հումանիստի ուսին խորհրդավոր կերպով դուրս տվեց կրկնվի կջղայնանամ ու իր մի ջիպի չափ մարմինն ու մի անտենայի չափ գլուխն անձայն քարշ տվեց աղջկա հետևից

Պոստարդյունաբերության դարաշրջանի ներկայացուցիչ հումանիստի վրդովածությունը պիտի սառեցվեր նա ճիշին զզվանքով պատմում էր թե ինչպես մի անգամ ԱՄՆ-ից Հայաստան դեռ նոր եկած ժամանակ թեքեյանի ինտերնետնոցում իր մեյլերը ստուգելուց հետո թռնեց տան ժամկան դուրս էր թռել հետևից մեկն ու կարոտակեց զոմբի-ժպիտով հարցրել ար յու ֆրըմ ըմէրիքը ինքը պատասխանել էր նոու սակայն հարցնողն այնքան չէր հավատում դրան որ դա դիպուկ սև հումորի տեղ դնելով միացավ իրեն հումանիստին և աշնան բեկորների վրայով ինչպես

Սողոննյան կղզուց կղզի անխոնջ թռվացող անհոգ ճպուռները միասին կտրեցին հանդիպակաց բոլոր փողոցները միմյանց զրուցահարելով

Նա Լիբանանից իր ընտանիքի կողմից Հայաստան զոռով բերված հայուիի էր այն հարցին թե ինչ է իր անունը հումանիստը մանկական միամտությամբ խոստովանել էր Արմեն և դա Մէրիէնին այնքան էր զվարճացրել որ խելքից դուրս կոմպլիմենտներ էր շաղ տալիս հումանիստի հասցեին կրակոտ սրամտությունների ծաղրանքների համար ու իր սեփական անունը կրկնում էր մէ՞րիէ՞ն մէ՞րիէ՞ն ոչ մարիաննա մէ՞րիէ՞ն (հումանիստի ուսը նոր սկսում էր անտանելի ցավել (ամորձացավից ուժեղ))

Սրան հաջորդող հումանիստի մյուս նախադասությանը ճիժը ստիպված էր արդեն արձագանքել պնդելով որ երբ ինքը քիչ առաջ բարևեց դրան վերջինս ոչ թե ինչպես հումանիստն էր պնդում ասել է «այս Մէրիէն» այլ «այս մէրիէն» ամուսնացած (լավ բա

արևակնոցավորը դրա թիկնապահը չէր ո՞վ էր) չէ նրանք չէին կարող չմտածել
ինչպիսին և ինչու լինելու շուրջ և այվանվ վրդովված վիճում էին վրանք վավ վիվվ
վվվվվ վ վվ հումանիստը հրամայեց տանձիդ չդնեն հանկարծ

– Մենք Սահտակ Ենք –
– Ներկայացուցիչ Արական Սեռի –
– Երիտասարդ –
– Շնորհալի –
– Յրապուրիչ –
ԱԲՍՈԼՅՈՒՏ

VIVE LA JEUNESSE!
!Explosif!
Le centre de l'univers
La Révolution potentielle
Beaucoup du sexe intense
La plus belle et convulsive et expérimentale à la folie
La plus enviable
La plus
DO IT

Ծերունական իմաստնությամբ երիտասարդության պոտենցիան չես փոխարինի

սփոփովում էին նրանք
ու բոդրիյարվում որ մենք կմնանք ուտոպիստներ երազելով իդեալի մասին բայց ըստ
եռթյան գարշանք զգալով դրա իրականացումից ընդունելով որ ամեն ինչ հնարավոր
է բայց երբեք չընդունելով որ ամեն ինչ իրականացված է

Ստեղծվել է աննշան մարդկանց ոչնչացման գենքը փրկվեք լրջմիտ հօհոացող
անարտահայտիչ մտասույզ գեղեցկագույն տգեղ անտարբեր տարբեր կենսախինդ
դեմքերով միմիկաներով էկզոտիկ շորերով պատռտված ժեստերով ոտքերով
գոտկատեղերով մերկ կտրում են փողոցներ կտտացնում փողոցներ փողոցներ ին չեն
փողոցներ իսկական Մորգեի այբբենարաններ!

- `,,,: „Բոլոր,, հարցերին կա: մեկ պատճասխան
 - Քա՞: Քահա: Որ՞ն ա:
 - Զգիտեմ:

հահահափոքրիկ աղջիկ, որը ժպիտ է փնտրում ուրիշների մոտ ու շատ է վշտանում: Նա խորհրդակցում է իր ժպտացող մոր հետ: «Մի վշտացիր, քաղցրիկս, միշտ էլ կգտնվեն պեղոֆիլներ» հարբած արցունքներով էր խոստովանում խնդրես

ԿԱՆԴՈՒՄ ԾԱՌԵՐ

માનાર

ամորֆ թիսպերի ջրե մազերուն խցանվեց պսպղուն մայրուղուն բուտերբրողված սև մեքենան

ԴԱԼԻ ԽԵՂՈՆ

የኢትዮጵያዊነት

ԱԼՐԵԴԻ ԱՐԴՈՒՆԴԻ

պոետի հոգի

Դարեդար սնվում արած

արագ ամենից այս արևի

թեքեմ աչքերս ու կորցնեմ ակնթարթ

Յեյ, գրադարանավարներն ու գրավաճառներն ու գրողները ամենաբարեխիղն բոզարածներն են

աամեն պահ ընտրության առաջ ու հետևում

ONE WAY

Խոհեմտությունն, այսպես, ամենքիս վախկոտ է դարձնում

Ինչպես կլինի ռուսերեն մասնակցել ընտրություններին = կупուտ կոտա մատուցել ինչկիցե,

այս կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ երևակայության խղճուկ կապկում կամ հակառակը Վերջապես ֆե՛ն, կամ հակառակը: Քամու մասին ֆիլմ ենք հանում:

Գոյությունն անց էություն

ինդետերմինիզմ

Եությունն անց գոյություն

ս պ յ ե ո դ ա լ ա յ

Մի րոպե մի րոպե մի րոպե, իսկ ինչի՝ մասին է գմում խոսքը:

Քանի դեռ չի պարզվում՝ կյանքն ինքն ինչի մասին է, դժվար թե որևէ մեկը սրանից առավել խելքը գլխին պատասխան գտնի այդ հարցին:

0000000 տարի առաջ 00000000 տարի հետո, մեկ է. պատերազմը

ամենախորաթափանց երաժշտությունն է:

Նիհիլիզմը ժխտողն ինքը նիհիլիստ է

(դե հերիք թարթես. կարգին չի լինում կարդալ, ինձ աչքերումդ արտացոլված են կարդում, համն արդեն հանեցիր... չնայած չե, սա ել իր համն ունի)

Աչքերը տեքստի հայելին են

Ծամածովել կամ հակառակը. սա երկիր է, ուր սոցիոլոգիական տվյալները ահ են ներշնչում առողջ բանականությանը: Յայաստանը ի ցնծություն համայն աշխարհի տապալված հսկայական Անասնաֆերմայի կտորտանքներից է, որոնք արդ վերամիավորվել են, արդյունքում՝ Անկախ Խողանոցների Յամախոնչյուն (ԱԽՅ) ՏՈՒՆՍ, ՈՐՏԵՂ, ՈՐ ԵՄ

Նայելիս կանացի գծագրումներին շվարած հիացքով, հանկարծ օրորվող Կենաց Ծառից գլխնիվայր կաթեց նրա շնչող մերկ մեջքի վրա, արևն ակնթարթորեն նկատեց այդ ու, նախանձախեղդ, իր շոշափուկներով սկսեց ներծծել պստիկ ավազանը հեշտապանքի՝ մրցելով իրաշասլաց մարմնի՝ նրբանկատություն քամահրող ծակոտիների հետ Դե ուրեմն հարց չի կարող լինել գերեզմանաքարի տեղահանության մասին:

Առնվազն մարդ մնալու համար պետք է լինել ավելին, քան մարդ

Արտասուբք: Անձրևի մասին պիտի ֆիլմ հանենք: Լիքը: Միզախառը, թքախառը:
Ամեն ծակում՝ ≈միմի աղջիկ, ամեն աղջկանում՝ ≈միմի ծակ, ամեն այդ ծակում էլ՝ ≈միմի
տղա, որտեղ բոլոր գոյականները x են, իսկ կյանքը՝ իմպրովիզացիա կյանքի թեմայով
ո՞վ է իմ վերջին ընթերցողը ապոկալիպսիսի փլատակների տակ

Գիրը:

Դեն նետեց ոտքերն ու երկնքի չափ հսկայական վառ մոխրագույն արևի ներքո քնեց
սյուրարտերում վազքի մեջ: Էջակադրեր կտրեց, թղթապատ զարտուղիներով, կտրեց
կադրեցեր:

Հումանիստը ժամադրված էր մի աղջկա հետ: Երեկոյի վրա: Մի փոքր կաֆե: Բկները
գարեջրով թրջելուց հետո նրանք միասին գնացին աղջկա տուն: Տունը սարքին չեր:
Լույսերը մարեցին: Որոշումը կայացրել էին. նրանցից ոչ մեկը չկարողացավ հիշել
դիրքի ճիշտ համարը, որա համար էլ հումանիստը առաջարկեց տալ դրան նոր անուն
«հոր դոգ» (раком). Նրանք պատրաստվում էին կոխվել շների պես: Իր կարմրավուն
փայլվլուն սուզանավն աղջկա մթին փոսիկուն գոյացող օվկիանոսի մեջ խրելուն
պես` (Եվրիկա, ոռնաց Արքիմեդը, երբ հումանիստի sex machine-ը խրվեց, ճաճպացող
հեշտոցի միջից հեղուկ դուրս ցայտեց) հումանիստը կրօստ մի հոգոց հանեց ու սկսեց
դանդաղ էյֆորիկ հրմշտոցը: Աղջիկն իր իմաստուն տնքոցներով դիրիժորություն էր
անուն հրմշտոցներին: Մի անզգույշ, ջղաձիգ շարժումից հումանիստի գրպանից
նորատետրը ընկավ գետին. Չը ճպոցի ձայն եկավ: Տռիացող հումանիստը,
այնուամենայնիվ, լույսը վառելու ցանկություն հայտնեց, ծեռքը մթության մեջ
խարխափելով տարավ լույսի անջատիչին: Կարծելով, թե գտել է, նա մատներով
շոշափեց քանդած վարդակը: 220 վոլտ հոսանք խիեց: Հումանիստի բախտը բերեց
այնքանով, որ իր առնանդամն ալարկութությունից աղջկա մեջն էր թողել. լույսի
արագությամբ անցավ հոսանքն աղջկան: Մինչ հաղորդիչ հումանիստը կհաջողացներ
ձեռքը հետ քաշել վարդակից, աղջիկն էլեկտրական հոսանքի ցնցումների տակ ցուց
ուղիղ հումանիստի բաց դոշին: Աղջիկը հրաշքով ողջ մնաց:

Անամապ գիշերով տուն գալուն պես՝ հումանիստը հյուրընկալեց իր վաղեմի ընկեր
ճիժին: Հումանիստը պատմեց իր անփառունակ արկածը, իսկ սրտանց հոհուացող
ճիժը որոշեց այնուամենայնիվ չծավալվել զուգարանում տեղի ունեցած իր
ձեռնաշարժային արկածիկի, կամ, ընդհանրապես: Փոխարենը նա առաջարկեց
խաղալ իրենց հին խաղը: ճիժն ու հումանիստն ու սենյակի պատերն ու
կահավորանքն ու քրտնակաթիլները Rolling Stones-ի Sympathy for the Devil-ի տակ
կուբիստական վոլեյբոլ էին խաղում՝ լուցկով⁶: Նրանք շուտով սեղմեցին մինյանց
ձեռքերն ի ցտեսություն: Իրենց սենյակներում տեղավորվեցին իրենց PC-ների դիմաց,

⁶ ՓСК Գոմելъձրեվ. ՏԵԼ. (02322) 3-13-15. ՓԱԿԸ (02322) 3-41-44.

ձեռքները ամսինխրոն, մինչ խորհրդավոր կերպով դդդրեցին պտուկաշարներին մատներն ու սկսեցին կթել պտուկատառերն ու լիանալ:

Մեր քաշած օրերի հասարակական-քաղաքական-տնտեսական ողորմելի Յայաստանը օրեճօր հազարներով բնակիչների էր տշում իրենց հայրենիքի սահմաններից դուրս՝ ապրուստ-մապրուստ (կամ Պրուստ կարդալու ժամանակ) ճարելու:

Չքաշեց. մի քանի ամիս առաջ այդ հոսքի մեջ էր տապալվել հումանիստի կյանքի մեջ սիրո ու հեշտանքի թիրախը:

Գիշերվա կեսն անց, նույն սենյակում: Ստեղծագործական տարերքից հետո շունչ էր քաշում: L.-ից հիշատակ մնացած երկնագույն մինիշրջազգեստը հագին, հումանիստը մի երկու շիշ օղի գլխին քաշելուց հետո հարբած կթել էր տոքսիկ ծանրությունից, թե դատարկությունից, լռակյաց ունայնությունից, սսս. *թեթևակի ինտերշում ծղրիդներով...* այդ երկնագույն մինիշրջազգեստի տակից ցաքուցրիվ դուրս պրծած նրա փոչոտ բդերը անկանոն ու դառը արցունքակոծության էին ենթարկվում: Գարշելի *sentimentից* սթափվելով՝ հումանիստը մղկտում էր բոլորի ու ամեն ինչի հանդեպ իր արած ու չարած ստորությունների ու լկտիությունների համար

K

Յայր. ՕՕԾ, Ախչիգս...

Մերիէն. Ես անուն ունեմ՝ Մէ-րի-էն։ Յազար եմ ասել...

Մայր. Սոված ես։

Յայր. Յա, Մերիէն... Ի՞նչ արիր էն գործը։ Էսօր հեզ ո՞ւր քնացիր։

Մերիէն. Քաղաքի տեսարժան վայրերով քիչ մը գբունեցի։

Յայր. Դեսբանադներով հարգավ...

Մերիէն. Յավը չեք տալի՞, մա։

Մայր. Դաբագել ենք արդեն... մղաձեցինք ավելի շուտ գքաս. իիմա տաքացնեմ։

Շորերի շրջուն

Զայն չկա

ճտճրտճրտճ

ճճճճճս

Յայր. Փոքրիգ բինթիիս, գերևա, թե մերժել են դեսբանադանը, իը՞... Այ քեզ քսենոֆիլիա։ Ի՞նչ ունես Ամերիգա գորցրաձ։ Ադոր եղած-չեղածն, ախր, Յենրի Թորոն ինքը կրղավեր, թե Ամերիգայի հետ յուրաքանչյուր համագործակցություն մարդու կխայդառագե։ Ախր, հսգագան երգում գաբրիս, հայրենի։ Ազադ-անզախ, ֆաղլան...

Մայր. Յեսա, Մերիէն ջան, բալաս, կոլադ կրացեմ։

Յայր. Ամեն օր քաքա քոլա, ամեն օր։ Բինթիս...

Մերիէն. 200 տարում արել են էն, ինչ 20 տարում չի հասցրել *ոմն Մերիէնի հայրը*։ Իսկ 2 րոպեում՝ *ոմն Մերիէնի մայրը*։

Յայրը, Մայրը փորձում են գլուխ հանել։

Օգտվելով առիթից՝ Մերիէնը՝ հայելու առաջ կազմած, արևի պես, նայում է իր կրծքերի տեսքին առանց դրսում հագած իր կոֆտայի։

Յայրը թուլացրեց Մերիէնի անձնական աթոռի ոտնակներն։

Յայր. The sweepings of (բլիկ) every country including our own!

Մերիէն. Then America's the right place for you!

Յայր. Չափերդ անցար։

Մէրիէն. (հոր խոսելածուը կակպելով) Յա հա հա: Չի՞ ծառայում արդյոք մարդկային ցեղը ոչնչացնելու ընդունակ միջուկային աղետի ապառնալիքը այն ուժերի պաշտպանությանը, որոնք ձգտում են հավերժացնել այդ վտանգը:

Մայր. Մէրիէն ջան, ջնշումը բարձր է, ձաղր մի արա:

Յայրը չէր լսում

Յայր. ... Լավ, դայդին համոզեցիր: Ես ինքս կզբաղվեմ Ամերիկայիդ գործերով, IN BOMB WE TRUST! (Մենակ թե շուտ սիկտիրո՞ք քաշես): Դըրամց տիրո՞շ մերը ք... Գդեգավարեն. ինչ իրենց պեղությունը, ինչ իրենց խենը, մե՛ք են ըրել: Ե՛րբ-ոնց տնօգվի՝ մի տեղ ափոկի գոխեն:

Այդ միջոցին, հայելու դիմացը կանգնած Մէրիէնի խոհուն հայացքը, կամաց-կամաց, սկսել էր սահել ներքև, այնուհետև դեպի իր իրանի սահուն էջքը՝ վայելքների այգի, հայելու մեջ այլևս չէր երևում նրա շուրթերին հետզհետեւ նկարվող ժպտադեֆորմացիան. երևում էր այն միայն իր պուճուրիկ անուշահոտ բերմուդյան եռանկյունուն՝ թարմ պցիկին, UNITEDSTATESOFAMIRACLE, Կոխեն: Ա՛հ: Կոխ կոխեն: Ա՛: Մինչ Պանամերիկյան ուառառառասուաթերիիպերմեգագիգապոլիմակրօհօհոռզազմ

Մայր. Են խեղջ գինը մոդդ հիվանդանոց այցի եզա՞վ ըսօր:

Յայր. Այ գին, հիվանդությունն ասա. ի՞նչ իմանամ՝ որի հետ ես...

Մայր. ...ունտգեն...

Յայր. ... Աա, Էվելինան... Փառքդ շադ Ասդված, erosio colli uteri արդեն անբուժելի արգանդի էրոզյ

մի քիչ արեւ սառը զրի մեզ: Վրաստացիք գրասլ երկնիքում: Եւլ սուպիռ է իր սառչող սրբակ ժողի մեզ արմիին, ահա ժիւադ երեկոն՝ ոճրագրութի բարեկամ, վասելիք դեպի հողիկոն, ուշ է արդեն, շրասուելիք, զույգ բռնել կարենանիք ներթեւ իզած գեյշ մի շող, ու ժաղաքի ճահճակրակ պարուհանելերի, զուլապիլերի, շապիլուերի ներթոն շուրջպար են բռնում իրոշի ու աղբ ու պունի՝ հավերժական մի բանացեւ, մեղրում՝ սրիզահարում, բռնել արտասալում են ինքրիկելերի զույլերի հետեւից: Վրեւու սիրում է բացառապես Քիշերիան ու ուղղում է երկրին իր լուսակայլ բռնությունը, զարշելի անկում, ու սեղմահեղունի շաղիում է երկնակամարով մեկ, պապղում ու մականչակիում «ասպղեր»: Եւլ այլապէս եղաւ, որ, անհերթ, մեր պապղերուիր եւ

մեր և հանուգթեսակ պես արտաված թղթե մարդիկ ու երանց պարկերով եւ և հանուգթեսակ պես կերպարանափոխվող մարդիկ քեզ անցան անսպասելիորեւ ինչպես միշտ ու երանցից ունակի յուսան երացելու, որունի մինչանց եւ պարրազուծվում, վերածվում իրավան կողաժի: Եռոր փակեցի միևնէ աշարեղ գրանցածն յուխսար՝ որոշ պաղպակի կենցաղայի գործողություններ կարարելու հոգևորութիւն պահանջից պրոված՝ պարզվեց՝ յուխսարի աքերը փակեցի: Տեխսրի այդ քեզ անցավ: Տեխսրի այդ... Երաց յուսավ: Այս, երաց, որի գրավոր արդահայրության հետ քիչ հեկու (կամ հենց հիմա) կարեցի է ծանոթանավ: Դեռ առգետում են յուխսարն անխնության օրերը, սակայն միայն գեղարդուն այդ անխնություններ կանչեցելու համար երաց դիրաժն է. մեկն արդուն, անմիզական ակրիվ գործունեության, հաղորդակցության մեջ (որպեսից ևս իր երանուր երացելու համար նշոք է որսում), մյուս՝ երացելու, մշականության գրեռում, զու էլ, թերեւս, պանցից ինչ-որ մեկում: Եղ արդաւ անլերզ: Հիմա շարժելով, գրքի հետ միասին յունենիք երաց առաջին երացը, երացը, երացելու, երաց, ետք, ետքաց, եսպեր, եսպերը, անեցեր.

Միան ապրում էր, այստեղից հաշված, տասնյոթերորդ հարկում: Յայրը՝ գործազուրկ էսթետ, մայրը գործի էր: Միան հպարտ տեսք ուներ, երբ տան դուռը շրիկացնում էր իր հետևից, և՝ միջակ, երբ ուղղակի դուրս էր գալիս՝ առանց դուռը շեշտելու: Յագ ու պատրաստ կանգնած էր երրորդ մայիսյան առավոտյան ժամը 8-ին աստիճանների շեմին, վերելակը, իր արյան պես, տեղ ու դադար չուներ: Նայեց ընդհանուր պատշգամբից: Երկինք: Փակեց գրգռված առնանդամագլխիկների պես խոնավ աչքերը և շրջվեց դեպի թռվացող աստիճանները: Նրա աչքերը, մեծ-մեծ, ժպտում էին, բերանիկը՝ նուրբ կարմրեցրած՝ շուրթերի մասում, կգնար ամեն տեսակ դեմքի արտահայտության հետ, չեզոք էր: Դիմացի հարևան, տարեց, գրող Բակզալը «Միրաժ» բարում մի օր ասել էր իր մորուքավոր գրուցակցի սիլուետին, որ այդ խորհրդավոր բերանիկի գոյությունը միմիայն տիրոջից բաժանվելուց հետո ես մտաբերում ու ամեն անգամ այդպես, որ գուցե չկա, կամ ոչ մի շրջունք չի համտեսել

այն, որ գուցե իրեն էր վիճակված դա անելու, որ, ի վերջո, ինքն այդքան տարիներ դրա համար էր, թերևս, իրեն մաքրամաքուր պահել Ամուրի ֆրոնտում, և որ Աստված ոչ թե մեռել է, ինչպես իր սիրելի Նիցշեն էր նշում, այլ ուղղակի այլսս չի խոսում մեզ հետ. նեղացել է, այնուիետև, նկատելով Գարեհին՝ Միայի ընկերոջը, շփոթված անցավ ֆրանսերենի: Թարթող գույները բարում երբեք չին կրկնվում, և մարդիկ ժամանակ առ ժամանակ փոխում էին իրենց ռասայական պատկանելությունը: Եվ շատ որոշակի էր, անգամ ճակատագրական, բարից դուրս գալու համար հարմար պահ ընտրելը: Բանն այն է, որ, եթե դուրս գալու վերջին պահին քեզ վրա, ասենք, ուղին լույս ընկներ, դուրս կգայիր որպես պցաչյա վիետնամցի, կորեացի, ուզբեկ, թաիլանդցի, մոնղոլ, որոզ, լաոսցի, դազախ, չինացի կամ լավագույն դեպքում՝ ճապոնացի և այդպես շարունակ նման բանաձևով: Այդ կերպ ռեկորդային այցելություն էր ապահովում «Միրաժը»: Յուրաքանչյուր դժգոհ կամ էքսպերիմենտատոր (թերևս կրկնեցի) այցելու կրկին կարող էր այցելել բար վերջին այցելությունից միայն 24 ժամ անց մի մերկ աղջնակ ինչ-որ ինչ-որ ծովի ափին Չեշիրյան կատվի կացնահարված ժամանակի հետ խաղում էր ինչ-որ ինչ-որ ծովի ափին, բավականին անհանգիստ, ինձ ին օպերատորը հուշում է, որ իրականում աղջնակը տեսախցիկի օբյեկտիվի ֆոկուսի հետ պահմտոցի էր խաղում, բայց այն բանից հետո, երբ հանգուցյալ կատվի ժամանակի մեջ աղջնակի պցիկի մեջ, աղջնակն իր կնճռազուրկ խաս ճակատին մտահոգության ինդեքս հաղորդեց: Ամուր բռնելով իր սեռական շրթունքներից՝ նա փորձում էր դուրս թողնել ժամանակ, նա անզգուշորեն ինքն իրեն շրջոնք դարձրեց: Ծովային քամին դրան էր սպասում, որ ուժգնանա ու շաղ էր տալիս ավազահատիկի փոքրության արյան կաթիլիկներ, որոնց միջով ոչինչ չէր երևում: Գլորվեց նրա արյունլվա մարմնի վրայից մի աչք դեպի ծովը տարօրինակ արագացումով: Միքելանջելո Անտոնիոնին իր ծեր հետույքը շարժեց, հասավ դեպքի վայր ու մերկացավ, մտավ ծովն ու լող տվեց աչքի հետևից: Նա ուզում էր հասնել ու բռնվել չսուզվող ակնից, քանի որ լողալ չգիտեր, և ուզում էր հավեսով լողանալ: Իսկ երկնագույն դուշի տակ խեղդվող Գարեհը էությամբ էրոտոնան էր, երբեմն նեղաչ, երբեմն նեգր, մեկ-մեկ էլ՝ հնդկացի, և այնուամենայնիվ նրա մտքով անգամ չանցավ գնալ տեսակցության այն շրջոնք դարձած աղջնակին, իսկ, իրականում, «Միայի ընկերոջը» ասել՝ նշանակում էր պարզապես դուրս տալ: Գարեհն իր տուն մարդ չէր հրավիրում, որովհետև մարդիկ 9 000 000 000-ից ավել էին, իսկ իր տուն՝ 6 քառակուսի մետրից պակաս էր: Իսկ եթե միայն Միային հրավիրեր իր տուն, նա կարծում էր, որ մեղանչած կլինի մյուս մարդկանց հանդեպ, «իսկ մյուսները ինչո՞վ չեն արժանացել հենց այդ պահին հենց այդտեղ լինելու շանսին»: Ահա նա, անցնում է մարդաշատ վարսավիրանոցի լայնարձակ պատուհանի մոտով՝ կոտորելով քաղաքի ռակուրսները: Իսկ ինչ վերաբերում է Բակվալի «զառամախտին», որը

SWEET DEATH BECOMES HER կոկտեյլի համն ուներ, ապա այն նրան ընդհանրապես զգվելի թվաց, և չեր հասկանա՝ ինչ է, ով է, ում է այդ մարդը, չնայած ձեզնից էլ նմանապես գլուխ չեր հանի: «Ես, օրինակ, իմ տարիքի տարեկիցն եմ», մտածեց ու չհասկացավ իր ասածի իմաստը Գաբեհն և կրկին չհրավիրեց նրբանցքից հորիզոնում երկնքի ֆոնին անսպասելիորեն հայտնված ծանոթ մի աղջկա՝ կարմիր կիսավերարկուով, ձեռքերը կարմիր գրաններում, ծովախխունջի պես մազերով, կարմիր զվարճալի թերետով, իր տուն: Միային:

Այդքան կարմիր... արդեն «ցելկեն առել են», հառաչեց մտքում սարսափելիորեն թևաթափ եղած Գաբեհն ու այդ մտքի հետ մի քանի օր անց փոքր-ինչ համակերպվելուց հետո համարեց, որ Միան, թերևս, սովորականից շատ էր արյուն կորցրել ու խելքին մոտ կլիներ՝ փոխեր... այդ «պղծված» հագուստը: Երևի թե կոխավելիս հագուստը հագին էր:

Իր տունը ո՞րտեղ է:

Միան ո՞ւր է:

Ինքն ո՞ւր է: Ճետ նայեց: Շրջվեց: Նրան օգնող չկար. միայն մարդիկ:

Կրկին թվացել էր: Կրկին թվացել էր: Կրկին թվացել էր: Կրկին թվացել էր: Կրկին թվացել էր:

Կրկին թվացել էր: Կրկին թվացել էր: Կրկին թվացել էր: Կրկին թվացել էր: Կրկին թվացել էր:

Իսկ իմ առնանդամը խռիկներ ունի: Դրանց շնորհիվ այն չափից դուրս երկար է դիմանում ինչտողի օվկիանոսների մեջ: Յըմ... դու ուղղակի տարիքդ ես առել, սեռական պոտենցիադ էլ անգթորեն լքել է քեզ, ու տարիներով էլ հրես, չես չվերջացնի, հրես, չես վերջացնի...

Ամեն օր, երբ չեր ստացվում տեսնել իրեշտակին: Չլինի^o այլևս չկա. մահացել է, իսկ որտեղից կարող էր իմանալ. ո՞չ տան տեղը գիտեր նրա, ո՞չ էլ, ասենք, Զանգվածային Լրատվության Միջոցները կարձագանքեին, թերևս «Միրաժ» բարն է մի օր մտել ու մաշկի գույնն անճանաչելիորեն փոխել, միգուցե նրա անունն է խժոել ուլմացի Մոգն ու մարսել, և այդ դեպքում նպատակահարմար կլիներ որոնել Մոգի տվյալ կղկղանքը երևի թե Մարսելում կամ... Վայ, զուլում... Ամեն օր, երբ նայում էր տասնյոթերորդ հարկից ներքև՝ քաղաքին, այն իրեն մեկ այլ Վենետիկ էր հիշեցնում, որտեղ փողոցները նույնպես, վայա գուլուտուտ, գետեր էին, բայց արագավազ, որտեղ ջուրը հագնում, զուտլուտու, հաստկող, պոստարդյունաբերական փոխադրամիջոցքարերի, գլորվելով, հոսում, էր, ծովս, այս, ցայտելով: Երբ տեսնում էր՝ ինչպես է Միան անցնում այդ գետը առանց խեղդվելու, առանց առանձնապես լողալու:

Քայլելով: Կամաց-կամաց մոռանում էր «Միան» և ամրապնդում «Ճեշտակը»:

Զուլում

Ինձ ինչ-որ մեկը բացած վիճակում սկսեց պատառոտել, այդ պահին ես աճող

դատարկություն էի զգում և հույս ունեի, որ երբ նա փակի ինձ ես կլրացվեմ նորից, որոշ չափով, բայց ոչ, նա ինձ փրթեց ամբողջությամբ, լցոնց սև տոպրակի մեջ ու տարավ:

Սև սիլուետը օրորվելով դուրս եկավ բարից, օ՝, ինքը Մեզասը՝ Բակզալի մտերիմ զինակիցն ու ատամնաբույժը. ամառանոց չգնաց: Ամառը սպասում էր, օձը՝ սպասում: Ամենափափուկ աթոռը դժկամությամբ, վա՝, գրկել էր Մեզասին ու տնքում էր, չնայած ստվերի տակ էր տեղադրված և նրա տան պատերով ու տեղ-տեղ պատուհաններով շրջապատված կանաչ այգում էր, բայց շուտով ցոյիկը Մեզասի քթից կրերեր, ու ինքը՝ աթոռը, մի լավ շունչ կքաշեր: Կոտրվեց աթոռը: Մեզասը վեր թռավ երիտասարդ ակրոբատի պես ու սկսեց վագել այգու շուրջը՝ ձեռքերը նեղ իր ջինսի առջևի գրպանները խրած ու պրկած, եթե կոտրվածը խուլ լիներ, կկարծեր՝ սա գոռում է գժի պես: Ինչ-որ բաներ սկսեցին լսվել. նախադասություններ, որոնց կառուցվածքը նման էր նրա գլխի հատուկենտ մազերի քառսային պարին՝ արագության տակ:

- Չղրծա, չչչչչ, կոծնս հա՝, շչսկգդմ, ը՛խ, մի թուղթ, ԳՈՆԵ, չքմեղանք, քղանցք, թքանանաման, դու էիր մղվո՛ր, դու, ը՛խ թուղթ մի հատիկ ու գրեի, չնյժ նչքն գրելու հարմարանք, Ի՞՞Ի՝ գրող, ողջը փորըցըվիդ զոհ, ցոյիկիդ, Օ՛հ, օ՛հ, Բբբզկզ...

Պատ, ուհան, պատ, ուհան, պար, ուհի...

Վագում էր Մեզասն ու հոգին նրա չարչարվում էր, ո՞ւր փախնես, եթե միշտ փախնելն է մտքինդ:

- Բարև՝, աղջիկս, նստիր արևի տակ. այստեղ ընդիանրապես տաք է այնքան հերմետիկ է ծածկված, միայն վերևն է բաց, այն էլ... տեսնում ես հատուկ արևի համար:

«Էլեկտրաէներգիա է խնայում ճպլ գանգը ծվիս թայ», մտածեց պարուիի Սոնյան և սկսեց պարել առանց մեղքանալու, թե այնտեղ կոտրված ամենափափուկ աթո՞ն կա, բա՛ն կա: Մեզասը խորտակվեց տուն, մյուս կողմից դուրս եկավ ողջ ու առողջ ու քիչ անց մեծ դժվարությամբ հայտնվեց կտուրին ու մեջքով արևի աչքերն էր փակում.

- Սոնյա, պարի՞ր: Սո՞նյա, պահ-պահիրիի՞ր...

Սոնյան ոգևորվեց և պարում էր: Պարում էր, ձեռքերը, ոտքերը, կրծքերը փոխվում տեղերով, իրար էին տալիս... Մտավ այգու մեջ ու պարեցրեց ծաղիկներին այնքան, մինչև չկոտրվեցին իր ոտքերը, այնուհետև ձեռքերը, այնուհետև՝ ոգին: Բալետ... չէր ստացվի: (Տելաբ, հո, կստացվե՞ր): Երբ կոպը բարձրացրեցին, մի մեծ սպիտակ արցունք էր աչքի տեղ. սպունգով սկսեցին սրբել, սակայն ուշ գլխի ընկան. դա զուտ փոխարերություն էր: Սրտամաշ տեսարան էր: Մեզասը չէր էլ մտածում այս ամենը, իր ունեցվածքը ժառանգող մի էակի մասին: Ի՞նչ երեխա. սա սարսափում էր իր՝ դեռ չբացահայտված այլասերություններիցիցից, որոնց զոհը կարող էր դառնալ խեղճ ժառանգը, մի դատարկաբան սպառողով ավել և այլն: Բանն այն է, որ Բակզալը նրան

այն միակ անգամից հետո այլևս ոչ մի սեփական ստեղծագործություն այլևս ցույց չի տալիս, քանի որ Բակզալի տեքստի առաջին իսկ էջի վրա հառած առաջին իսկ հայացքից Մեզասը համոզված եղրակացրել էր. «Թղթի կարիես»:

Գաբեհը սենյակի լուսամուտից հանգիստ նատած նայում էր անշարժ: Երեխաները դրսում վազվզում էին, խփում պատուհանի շրջանակներին ու հօդս ցնդում: Նրան այստեղ իր ընկեր Բուրուն էր հրավիրել ու ամեն կերպ ստում էր, թե ինչու: Գաբեհը շրջեց գլուխն ու տեսավ սև միջանցքի սև ֆոնի վրա կանգնած իր ընկերոջը՝ թուլիկ՝ ինչպես կախիչին՝ շորը: Դայրը կիսատ երևաց հետևից, գլխով արեց՝ որպես բարև, և ընկերը կրկին կարգին նկար էր:

ՀԱ սկսեց ծիծաղել էլ հաշվելու բան չկար կնճռոտ թքահոս մութ խոռոչում

Միան չէր կարող անընդհատ նույն գույնը, առավելևս նույն զգեստը կրել, քանի որ Բակզալը արդեն քա՞նի տարի է՝ չի տպագրվել: (Որքան որ տարեկան է): Վերջինիս հիշողությունը վատթարացել էր վերջերս, և նա ցանկություն էր հայտնում նկարչի պես գործել. բնորդ(ուիհի)ներ էր հրավիրում իր տուն ու գրի առնում նրանց տեսքը, մերժված սուրճ խմելը, նիրիելը, երբեմն՝ տակները անելը: Բավարար գումար ստանում էր ամեն ամիս տարբեր խմբագրություններից՝ «միայն թե չտպագրվելու» դիմաց: Երբ Միան մերժում էր նկարագրվելու գայթակղիչ առաջարկությունը (համենայն դեպս այդպես էր թվում ծերունի Բակզալին, քանի որ Միան թևերի նյարդային ու անկանոն թափահարումներով փորձում էր այդ պահին քշել իր աչքերի փայլին ձգտող ահօնի քանակությամբ մլակների), Բակզալը խոսք էր տալիս Միային, որ կկանչի քեզի թորիին ու հավաստիացնում էր, որ բարի քեզի թորին յուրովի ու նախանձելի համբերությամբ կլուծի իրենց հաղորդակցության առջև ծառացած խնդիրը: Դա քիչ ուշ, իսկ հիմա պիտի պոկվեր. դիետիկ սնունդ ընդունելու ժամն էր:

Շաքար-շաքարախտ: Թե որտեղից էր այդքան քաղցրություն հավաքել, որ այժմ ծծովի կոնֆետն իսկ խստիվ չարաշահում կլիներ: Իսկ երբ խեղճ Բակզալը վրդովվում էր այն աստիճան, որ դա նկարագրելու համար չափազանցությանն այլևս տեղ չէր մնում, այդ, թերևս, նույն Բակզալը շարունակում էր կազմել իր ամենադժվարերևակայելի հայիոյանքների բառարանը, որն իր կյանքի կարևորագույն գործն էր համարում՝ իր Գլուխգործոցը – անգնահատելի ծառայություն մարդկության ուզածդ ժառանգին ի հանգստություն! Խաղաղելու իր սեփական նյարդերը՝ նա բառարանի միավորները գրում էր խստորեն հետևելով տառերի այբբենական հերթականությանը – այդ իսկ հոգեբանական արժեք ունեցող եղանակով հունի մեջ ընկնելուն պես՝ մոռանում էր իր դարդն ու ցավը: Ահա նա՝ հերթական անգամ վաճառելիս իր հոգին Մեֆիստոֆելին:

Վերջինս ազատ թափառող խենթերից էր, որն իրեն հաճախ Մեֆիստոֆել էր անվանում: Եվ այդ պահերը Բակալը աշխատում էր ոչ մի անգամ բաց չթողնել՝ ինչպես ես՝ այս տողը:

Եվ ընկերը դեռևս կարգին նկար էր: Ընկերը նկարիչ էր, որն այնուհետև իր ընկերոջը անտառ՝ ավելի շուտ նրանում մի բացատ: Գնալ այնտեղ նկարելու: Սակայն Գաբեհը իրաժարվեց, որովհետև երրորդը միշտ ավելորդ է, ել ուր մնաց չորրորդը: Սակայն վերջին դեպքում փոխզիջում գտնել կարելի է. ընկերը ընկերոջ հետ թող գնա անտառ, իսկ Բուբուն ու Գաբեհը՝ նկարելու: Անտառ: Իսկ մկարիչը՝:

Կուսազրկված անտառում մեքենա չկար: Անտառում բացատ կար: Ծառերը կտրել էին տվել իրենց մազերը և այժմ կուզլիկ գողականների էին նմանվում: Կարծում էին. «Եթե, մարդկանց պես, ծածկելու ոչ «ամոթ» ունենք, ոչ էլ լիբիդո, էլ ի՞նչը ծածկենք»:

Չունենա՞լը: Տգեղությունը: Յինմնարություն: Յինմնմնարություն:

Յինմնմնմնարություն: Ումմնմ կամ ընդհանրապես, նրանք չպետք է չպետք է մտածեն: Չպետք է, չպետք է խեռին, ո՞ւմ:

- Ես հիմա ի՞նչ նկարեմ:

Գաբեհը հասկացավ, որ այդ հարցը ոչ միայն իրեն էր ուղղված ու լուր դիտում էր իրեշտակի բացակայությանը. «Լինի այստեղ, ամենն իր տեղն ընկնի»:

- Այդ դեպքում նկարիր կուրություն:

Ծառերն այնքան էլ թշնամական չեն. ամեն քայլափոխի ճամփա էին տալիս ընկերոջն ու իր ընկերոջը: Նրանց համար դա Գիշերային զբոսանք էր: Ընկերը նայում էր վեր հաղորդաբերի ոստայնին, որի միջով նետած հայացքի առջև զարմանահրաշ տեսարան էր բացվում: Օ՛, Գվիդո դ'Արեցցո, հոյակապ մաեստրո, քո ներելի ժլատությունը պնդում էր 4 գօների անհրաժեշտության կամ առկայության գաղափարը, եթե քեզ մեջքի վրա են պառկեցրել անիջալ գերեզմանում ու առիթ դեռ երբեմ չեն ունեցել դիրքի փոխելու, ապա տես... ի՞նչ 4, ի՞նչ 5 գիծ, աստղերը բազմաթիվ հաղորդալարերի ֆոնի վրա վերածվեցին ամբողջ նոտաների, չհաշված հատուկենտ գիսաստղերը՝ կես, ութերորդ, տասնվեցերորդները... ու ընկերն այդ նոտալից երկինքը վերծանող աստվածային մի մեղեդի էր մրմռում քթի տակ զանգվածային մշակույթի ոլորաններում: Իսկ արևի տակ քրտնահոսող Գաբեհը՝ դեմքով դեպի սևաչյա Բուբուն, փորձում էր կրահել, թե ինչ է սա նկարում, բայց ամեն ինչ պարզ էր, պարզ՝ ինչպես պարզությունը: Ծառերի սաղարթն, այժմ հետզհետև հասկանում էր Բուբուն, ոչ թե չկա, այլ երկնագույն է և որ այդ ծառերը ոչ թե սկինհեղներ են, այլ... մեռել: Զանում էր Բուբուն վրձնով պիսկել, խթկել խոցոտել կտավն ի մահ: Սև ներկը ծորում էր վեր ու ցած ու աջ ու ցած ու ցած ու ցած ու ցած ու հյուսիս ու ցած ու

հյուսարևմ ու ցած ու մեռյալ կետին էլ, կետին էլ, հարավ ու ցավ ծորում էր իր կոպերից: Քիչ ռիսկ է հարկավոր, դե կո՛խի, կո՛խի, է... Պիւծ. սև ներկը պրօել էր, բայց սևաչյա Բուբուի **բիբը** դեռ նոր է սկսել...

Գարեհը իր կրակվառիչով մորեխմերի հետ էր խաղում, և, դե, հավասար-հավասար խաղ անելու համար թևազրկում էր նաև..... ԲՈՒԲՈՒ, վայ, ԲՈՒԲՈՒ ջան: Զուլո՞ւմ: Ծիծաղում ու հրհում էր Գարեհը, փոքրկում ու կոռերը ցնցում, նա նոր էր հիշել, որ կյանքը փուչիկ է, իսկ շունչը փչելը զվարճալի թսկում՝

Վֆֆֆֆֆֆֆֆֆֆֆֆֆֆֆֆֆֆֆֆֆֆֆֆֆֆֆհահահա

- ՅՐԵՇՏԱԿԱՎԱՐԵՐՈՎԿԱՍ!

Սպիտակամորթի վերակերպված Գարեհը տեսավ Միային, և նրա առնանդամը ակնթարթորեն Պիզայի աշտարակի դիրքն ընդունեց: Իսկ դրա գագաթից կաթած իր լորձի օրինակի վրա նա ապացուցեց ազատ անկման հավասարաչափ արագացման օրենքը: Այդ միջոցին: Տուն էր բարձրանում, կրկին աստիճաններով Միան: Գարեհը պոկվեց հետևից: Միան թռավ երեսունչորսերորդ հարկ: Բակզալը՝ հետևներից՝ տասնյոթերորդ հարկ՝ Միան չկա: Միան՝ վաթսունութերորդ: Գարեհը համբուրում էր երեսունչորսերորդը, Բակզալի հետույքի շուրջ արդեն քանի օր է ճանճերի ոհմակ էր պտտվում ու չէր հեռանում: Բակզալի սարդը վերջերս սկսել էր շարքից դուրս գալ, ու խեղճ մարդն ի գորու չէր իր հաճախացած աղիքային քամիների դեմն առնելու մահացու ռիսկին դիմել, մինչ իրենց սիրելի հոսից խարված ճանճերը անվերջ սպասում էին, թե երբ են վերջապես համտեսելու իրենց սիրելի ճաշատեսակը: Այն վախից, որ այդ ճանճերը կարող են քստմնելի մի հարձակում գործել իր մինուճար հետույքի վրա, Բակզալն այլևս երբեք չէր մերկացնում իր հետույքը զուգարան գնալիս. նա սկսել էր տակն անել: Գնալով ավելի ու ավելի միայնակ էր իրեն զգում: Նա ավելի ու ավելի էր նախընտրում գենոտեքստը ֆենոտեքստին. այլևս չէր ստեղծագործում, նա թքած ուներ այն խրտվիլակների վրա, որոնք ավելի ու ավելի էին նվաստացնում նրան ամեն կերպ: Դամենայնդեպս, որ չգրելու խոստումը պահի՝ Բակզալին տարբեր խնբագրություններից շարունակում էին բարձրացրած աշխատավարձեր ուղարկել: Բակզալը կատաղում էր, հետ ուղարկում, ճղում գումարները, քթածակերին արևային ակնոց հազցնում, հոնգուր-հոնգուր լալիս: Նրան անվերջ աշխատում էին հղկել, համապատասխանեցնել հոգեբուժարան մշտական բնակության ուղարկվողի մողելին: «Et maintenant, déjà sens devant derrière, ou bien... comme vous voulez! ! !» չասաց նա: Այսօր սպառնացել էին նրա աշխատավարձը կտրել վերջնականորեն: Գործունյա մայրը գործի էր գնում սեփական ավտոբուսով: Առավոտյան շուտ նստում էր դեկին, ապակուն դեմ տալիս

համապատասխան երթուղով գնացող տրանսպորտի համարն ու ուղևորներ փոխադրելով հասնում գործի տեղ: Տուն գնալիս նա մտնում էր գիծ իր ավտոբուսով երթուղու համարը դեմ տալիս ապակուն, ուղևորներ փոխադրելով գնում տուն: Նրա բոլոր բույսերը հաշված էին. նա էր պահում ընտանիքը ու շան պես հոգնում: Երբ Միայի հոգնած-ջարդված մայրը օրվա գանձված ուղեվարձի ողջ հասույթը թքոտված մատներով հաշվելով, ծալելով ու գրապանը դնելով հասավ իր բնակարանը պարունակող բազմահարկ շենքի բակ ու սկսեց բարձրանալ վերև, կրկին աստիճաններով, նրա քթանցքները սկսեցին միմյանցից այլանդակորեն հեռանալ ավելի արագ ու ավելի հեռու, քան իր պտուկները տարիքային էվուուցիայի հետևանքում, և տասնյոթերորդ հարկում չարաբաստիկ դեպք պատահեց, և Միան սուրաց-խփվեց գլխով հարյուր երեսունվեցերորդ հարկ հասած հեռուստացույցին, նրանով գնացող գովազդին և՝ գրավեց Մեծն ԶԼՄ-ի ուշըտուտուտու տուտուտու տուտուտու օր գիշեր օր գիշեր օր գիշեր օր գիշեր օր տիեզերագնաց թռավ գնաց ո՞րն էր տիեզերք գնացած առաջին տեքստը Գագարինի ծոցատետրը հագին ո՞րն էր տիեզերքում ասված առաջին բառը...

Անթիվ անհանար քանակությամբ երևացող ու չերևացող աստղերը՝ չդիմանալով գիշերվա տիեզերական թուչանքին, սարքեցին գինար բուքաբաքը սատոն ու ինքնամոռացության նոպայի մեջ միմյանց հետ սկսեցին կենակցել միլիարդավոր հազարամյակներ առաջ և այս գիշեր վերջապես ծննդաբերեցին նրանք՝ բազմապատկելով անթիվ, անհամար անգամ: Ծիծիլիոնավոր աստղիկներ: Ինտենսիվորեն խտանալու արդյունքում միաձուլվելով՝ աստղերն ու աստղիկները հետզհետե լուսավորեցին ողջ երկնակամարը արշալույսից շատ ավելի առաջ ու շատ ավելի վառ:

Ֆերական տեսարան:





Դա երևաց երկիր մոլորակի կիսագնդերից մեկի մի կեսին միայն, կենտրոնը որի ընկնում է մեր այժմյան քաղաքակրության կարծեցյալ աղբյուրի՝ Արարատ սարի վերայ: Մոտ երկու ժամ անց, այսպիսով ավելի ու ավելի լուսավորվող երկնքի ու երկրի հատման կետերից մեկում նշնարվեց հետզհետե հայտնվող կուրացուցիչ լույսերի մի գնդածև կոնվերգենցիա:

Վերջինով լուսարձակվելիս՝ երկրագունդը, խորապես վայելչաբար խոնարհվելով (գլորվելով), երևան էր հանում գալակտիկական բիլիարդի անհամար գունդ՝ Արև մի օր չէ մի օր այնպես է ոռնալու իր մասին մինչ օրս հյուսված զանազանագան զրպարտանքների, անհեթեթ փոխաբերությունների անտանելի բեռի տակ, որ, ուզած-

չուզած, կրկին տեղի կտա իր շուրջ հյուսվող ձեռք է մոտենում ձեռքեր տարբեր տարիքի, թերևս միևնույն մարդու, ձեռք են տալիս ինձ՝ արդեն տպագրվածիս, թերթերս են հատ-հատ պոկրտում, կուրանում են, ամերավարի են բազմանում, դժվար թե, կորցնում են հաղորդակցական ունակություններս, անփութորեն լցնում են ինչ-որ սև տոպրակի մեջ, տանում են, թպրտում են ինձ անհայտ ուղղությամբ տեղափոխող նյարդայնացած ճամփորդի, ճամփորդների ձեռքերից կախված, սև թափանցիկ տոպրակի միջից բացվող տեսարանը անդադար փոփոխում է իր ռակուլսները, ահա և մի էակ, դերձակ հավանաբար, դերձակներ տարբեր դիրքերով դասավորված, գլուխները կախ են խոսում, ստվերի ու լուսի խաղը նրանց քանակությունը մի քանի անգամ բազմապատկում է, պիտի, հսկայական գամակ կարեն Պարսյանի երիտասարդության համար, տառաչափերս մեծացնելու նպատակով օգտագործում են խոշորացույց, գիշեր օր գիշեր օր գիշեր ահնդ կապատում են ինձ ծկուն ռադիոալիքներից ու մթնոլորտային տեղումներից, քանդում, մտքները փոխում, մի քանիսը թզուկների են վերածվում, իսկ մոտենալիս՝ հասնում բրոբդինգիների չափերի, չե, սրանք դերձակ չեն, սրանք ուղղակի տառերի համագործակցության ծևեր են, վիրտուալ և իրական թանաքի հետքեր: Ի՞նչ է կատարվում ինձ հետ: Մինչև ե՞րբ եմ կարող ինձ այս հարցը տալ









You have successfully installed the program!

ա ն ձ ն ա դ ր վ ա զ ն ե ր

Չէ, ես հոգմել եմ, աչքերս փակվում են,
ականջներս արդեն ոչ մի բան չեն լսում,
բերանս արդեն ոչ մի բան չի ասում:
Ինձ թվում է՝ մարմնիս բոլոր մասերն
իրարից անջատ են ապրում:
Մեջս չկա միասնություն: Ես, չէ՞ որ, պիտի
ինձ միասնական մարդ զգամ, իսկ ես ինձ բազմություն եմ զգում:

Ժամ-Լյուկ Գողար, «Խենթ Պյեռո»

ԶԵՌԵՐ

Արևի պես շրջանաձև, եղունգիս պես հարթ սեղանի վրա ամպերի պես կախված էին ձեռքեր: Սեղանի կենտրոնը պուճուրիկ սեղանիկի չափ շրջանաձև անցք ուներ: Զեռքերը զարդարված էին բազմապիսի ծխախոտներով և կրակվառիչներով, լուցկիներով: Այդ ձեռքերը անհավասար շրջանել էին՝ վերածվելով մութ անցքի հաստութարակ շողերի: Մի ձեռք քսվելով սեղանի մակերևույթին անհետացավ: Իր հետ տարավ իր ծուխ-կնոջը: Մնացած ծուխ-կանայք թեթևակի գիրացան ու թիթեռնիկների պես անվերջ ազատվում էին հարսնյակ-ծխախոտների միջից՝ զգեստներն իրենց նետելով սևացած կլորիկ անցքի մեջ, որը ոչ մի կերպ չէր, երբեք չէր լցվում:

Նրանք չէին լսում ընթացող խոսակցությունը, կապկում էին այն, պարում: Յանկարծ նրանցից մեկից սկսեց արյուն չռոալ: Զեռքերը սկսեցին նմանվել ծխի և, ինչպես ծուխը հանգցվող ծխախոտից, անկանոն կերպով անհետացան:

Շրթնաճանապարհորդություն:

Մուրացկանի ձեռքը իմ ու խելքահանիս ձեռքերի եռակցումից հետո մնացած պուճուրիկ անցքի մեջ զբոսնելիս մի ծաղիկ հարմարեցրեց՝ վարսանդը շրջապատող ծաղկաձեռքերով հանդերձ առ արև: Շուտով արևահարվածաղիկը ցրեց իրեն տնկող, տրտում, բայց հեռացած մատների անտանելի հոտը: Կանաչ ծուխ մոխրագույն երկնքի դիմացով: Չհասցնել:

Գնացքի լուսամուտները ծածկված էին ձեռնափերի հետնային և ոչ հետնային մասերով: Եղջերվի քարացած գլխամատների միջով ընթանալ: Ուղղահայաց ռելսերն ի վար՝ հաջորդ կայարանը – «Անդալուզյան դատարկաբանություն»՝ ֆլամենկոյի խանդավառ

Եղունգներով նվազված աչքեր: Քրքրված: Զեռագործություն, պուանտիլիզմ. սարեր, ձորեր եղնիկատու ծառերից ցած, տերևներ, ջանք, ջանք, ջանք, junk...

Զեռքսեղմում. թույլ, ձիգ, գունավոր, կոպիտ, երկար, ամրակուռ, հիգիենիկ, երազելի, էլեկտրահաղորդիչ, շոյանք, թռուցիկ, ֆոնը երկնագույն վարդագույն ֆոնին կրծքից հույլ կերակրող ձեռքը

Զեռնտու գնացք
Ծծկեր կին
Թունելանցք դեպի զրո
Ծծկեր մի կին
Դոնժոճ կուաե
Յոզնած ցին
Յեծած
Յանգուցյալ մարդուն
Թափառում էր
Թղթի չլրացված արանքների միջով

ՄԱԶԵՐ

Ժամադրվեց: Օրը նոր սկսվում էր: Չանգել էր, հենց արթնացել էր. հոգու խորքում սիրում էր իր քնաթաթախ ձայնի որակը: Պետքարան: Դուշն արդեն ընդունել է, հայելու վրա է նայում: Նախ աշխատանքի, ապա խելքահանի մոտ: Դռան դեմք կծկվել, հայացքը կարմրել, հառել ոտքերին՝ կոշիկներ խուժելիս: Արագ-արագ ուղղվեց առնանդամի պես, դուռը ծակեց, անցավ, գնաց:

Աշխատանքի:

Այնուհետև՝ խելքահանի մոտ:

Շատ հեռու:

Դուրս եկավ, խելքը՝ տեղն էր: Նայեց աջ ու ձախ, վեր, ունքերը հոգնած ընկան տեղը: Յորիզոնը շատ հեռու էր լեռ, բլուր չկար՝ հարթ էր: Յորիզոնը ծիածանագույն էր, դիմացը փրկած տարածքը, որտեղ փոքրիկ տնակ կար, իսկ քիչ հեռու՝ մեքենան իր տիրոջ հետ, ստվերի մեջ էին: Օձի պես բարակ ճանապարհը աղքատ էր շարժիչավորներով: Նա ներդրեց իր լուման, սլացավ դեպի հորիզոն-ծիածանը: Ուժեղ քամի սկսվեց: Երկինքը սևացավ, մեքենան սուրաց լի պանդոկի միջով: Սա այն պահերից էր, երբ նա ժամանակավորապես ֆորմատավորում էր իր միտքը: Քշվում էր լավ: Արագություն սիրում էր, իսկ քամին աջ կողքից էր ուժգին փշում, փշում ուժգին, հանգստում ռոմանտիկ ծիածանը մոմե հորիզոնում:

ԿՈՆ

Սիրուն աղջիկ:

Ականջի մեջ բառերն ինչպես սպասարահում
Ես երկար նայում էի:
Նա մատները կոխեց բերանը, ու դրանք էլ երբեք չտեսա:

Մի ուրիշ աղջիկ ավելի սիրուն էր: Նա ուներ ընդամենը երկու կոճ: Ներսի մասից կոճեր
չկային: Նա սղոցել էր ներսի մասի կոճերը, որպեսզի ծնկներն իրար գան, և ոտների
ծռությունը չերևա:

Պուերտո Ռիկոյից:

Տասներեք տարեկան աղջիկ: Նրա ձախ կոճի վրա նկատեցի դաշված պտուկ: Նրա
կուրծքը նոր-նոր սկսում էր հասնել կոճի չափերին:

ՏՐՈՍՔ

Օրը խցկել է ժամացույցների մեջ: Քամին սանրում է օրը, օրերը թափվում են մազերի պես, օրը սանրում է ժամի խագերը: Սանրում են, ու ոչինչ չի ջնջվում: Քայլ: Մայլ:

Չիշնջվումն ու ծերուկը մի առավոտ արթնացան, հիշեցին ու ծանր-ծանր դուրս եկան, տրորելով աստիճանները՝ ճամփա ընկան, դեպի արևելք:

Զարթուցիչ: Երկիրը նոր-նոր բխկում է իր աչքը: Անձրևի տակ մնացել ողջ գիշեր:

Այս անձնավորությունը չոր է: Առա ջին գործը արթնանալ չուզենալը, երկրորդը՝ լուսամուտին նայելը: Դժբախտ օրիորդը, որ այլ տեղ մնալու վտանգն զգացել էր արդեն, դեռ քնած է, երրորդ հերթին՝ նրան, ևս հայացք: Յամբուրեց փքվող, թսկելիս նեխահոտածություն թաքցնող շուրթերը ու փորձեց արթնացնել, շտապ վեր կացավ, փորձեց ժիմ անել՝ տապալվեց, սողաց զուգարան, դուռը փակեց հետևից: ...տեղը բերեց ինչն ինչոց է. ջուրը քաշեց, լվացվեց, աչքի ոսպնյակի բորբոքում, քայլայում, տանը կմնա, այսօր, խնդրեց փոխանցեմ: Գործի է: Ռծի չէ: Մեկ, երկու, երեք, հինգ ու կես հոգի կա, որ կգնդակահարեր, ձեռքը չի գնում, համոզմունքների, սկզբունքների աղճատում, թարախակալում... ոտքը չի գնում... իսկ եթե մրա՞նք գան: Ոտքը չի գնա: Նրանք կմոտենան ավելի, ոտքը... ա վ ե լ ի, ձեռքը... վրաերթ կանեն:

...Ծեծկոտուք-մեծկոտուք-զևսկոտուք:

Նա իր սիրումիկ կույսի ամենօրյա սրտաճմլիկ ծիսակատարություն դարձած հեշտամոլ կրթերի գայթակղիչ գրգռմանը ևս անտարբեր: զզվե՛լ

ՇՈՒՆՉ

Այստեղ, բաժակի մոտ, ես՝ ծխախոտ, նա՝ լուցկի: Կամ մոխրաման: Նյարդայնացած ծուխը հոգու հատակագիծ է կեղծում. անվճար ռենտգեն: Շունչս տպվել բաժակին, ինձ հետ շնչում է՝ իբրև քոքեր: Շրջվում եմ, և ցած է ճյուղավոր աշտանակն ընկնում: Մութ:

Այգու մուգ մանուշակագույն անշարժության և մեռյալ խաղաղության մեջ քամին քշում է. կցվել մեռած տերևներին: Օդապարուկ

ՆՅԱՐԴԵՐ

Հյուրանոցի բակում, նստած սեղանի մոտ, ծակվե՞լ, թե՞ չծակվել, ծխախոտը չի օգնում, ալկոհոլից ալերգիա, ինքնասպանության միտքը չի հղանում

ԱՉՔ

աչք

ԶԱՅՆ

Նյած

NEW YORK

4 AM, Greyhound bus terminal, Negroes, porters, escalators, lights, escalators, piONEer, always Cocka-Cola, cig-ends resurrected, Campbell cans warshipped, pillars leaning on dozing bodies gobbled up by clothes frenziedly munch my remnants sprinkle above police eyes invisible under visors, on clubs to hit, slash, cram bodies with bruise, to exhibit military body art, allnighdaymare, lifelong ROAD up to disCLOSED, bulged sleepless eyelids, escalating out and out and out into the Newyorkness of omnipossible coloring plus the orgasm of porous imagination jerked off by the past days routine, while doors sesaming open, beggars clutching at the newly-shown-up utterly novel, funny to hysteric giggling, eyelashes resembling their reached-out alms-hands five witch finger-nails of which prick the tyro's empty belly. New York & fear to make a step on. Strangers in the night. O. O that Mike or Nick was his, well, all I can recall now is that it was a nick-maim, that Hungarian unlucky porter-out-of-New-York-night-awe who asked not a rusty penny for carrying half of damned heavy items o' mine. Armenian, Jew, German lump each other together, talktalkandtalk on till you can feel the beat and feel the they-are-none-the-worse mind frame to draw you vorwärts groping stolzvoll through the streets unknown and brutalizing to the point of adrenalin boiling all away, right away with the thousanded sun-sperm bursting through enormous labyrinth of longest stone-pane geometrical cocks of N.Y. Three cheers! the sleeping, the awakened, all nations, races, and sexes that encounter each other perpetually right here or a little farther [good morning lady excuse me where can I find the six hundred thirty fifth avenue?] like the most eccentric rediscovered colors flowing into one another's indispensable expressiveness from upon the Artist's Canvass into. I find the Armenian flag in the bunch of others deceitfully waving themselves to us. Told of existence of no 635th avenue. Ladies and gentlemen even if even if building # 630, avenue # 5. I HAVE BEEN TO THE SIX HUNDRED THIRTY FIFTH AVENUE IN THE CITY OF NEW YORK! New York.

New York looked at me.

America smiles just to show its teeth

March, 2001, Yerevan

ԽՈՌՈՉՆԵՐ

Ես.

Երբ որ բերանս մոտ գնաց ականջին

Մեջը բան ասելու

Ու քիվ մոտեցավ, որ ասի

Էլ չասեց, բան չասեց

ճմոթվեց՝ ականջի ձև ընդունեց

Անցնելով հազար ու մի յուրահատուկ ականջի ձև չորս վայրկյանում

Մի փոքր բացվեց, փակվեց

Լեզվովս թրջվեց

Վերևի ատամներովս կծվեց

Մոտեցավ բլթակին

Ու ոնց որ աչքերն են կոպերը լզում

Շուրթերովս բռնեցի ականջը

Ու սղալով իջա հասա բլթակին

Շուրթերովս կախվեցի բլթակից

Ու կաթիլի պես ընկան բլթակից շուրթերս

ԽՈՌՈՉՆԵՐ

Աա.

Ինքը ինձ չի հարցրել
Ուզում եմ թե չէ
Ես եմ հարցրել ու ինքը ասել ա
«Յա, ուզում ես», ու արել ա:
Կյանքում չեմ մոռանա
Որ վերջացնում էր մեջս
Ոնց որ մեջս անձրև գար
Յորդառատ անձրև էր
Մարմնով ընգել էր վրես
Ու կայծակի պես գոռում էր
Անձրևը կտրվեց
Կայծակը պրծավ
Ես պրծա

Ն Ա Ճ Ի Ս

Պարզ երևում է՝
Ուզում ես տանս մեջ
ցեխոտ կոշիկներով կանգնել
մերկ մարմնիս վրա ու
կոխել պատին սեղմված գեղեցկուհի կնոջս:

Ես վեր թռա
Թուղթ կերա
Մի ուրիշ թղթի վրա
Գրիչով հարձակվեցի
Գրիչը չէր կպնում թղթին
Մատներս չէին կպնում ստեղնաշարին
Մատներիս հետ արմռեսլինգ էի կպել
Թուղթը խժուցի

Ես անգամ ոչնչի մասին չէի կարող գրել
Քանզի այն իսկույննեթ կվերածվեր ինչ-որ բանի

Շիզոիդ հուսահատությամբ
Նայեցի պատին
Յայացքս, սակայն, չճաշակեց պատը –
չորս կողմս պատերը պատված էին
բազմաթիվ գրադարակներով, որոնք
ծածկել էին ինձ շրջապատող բոլոր պատերն անխտիր.
Գրադարակների մեջ
Գրքերը կողերով դեպի պատն էին շարված

Սա է որ կա –
Իմ իսկական
Իմ իսկայական կտավը
Որի վրա
Ես ստեղծագործում եմ

Ինչո՞ւ

Ես դուրս եմ քաշում
Հափերով ահագին իմ նյարդապնակը
Վրան նյարդերիս բոլոր երանգների խայտաբղետ գանձան
ցասումով ցաք ու ցրիվ ցփնջած

Ես ծափ տվեցի ձեռքերս, մի քիչ քայլեցի, բաղնիքը վազեց մոտս,
Լվացվեցի, վերադարձավ, երկու, արդեն լավ նյարդուտված ձեռքերով
Բռնեցի գորգի վրա կանգնած ոտքերս, որոնց վրայի մազերը
Չանադրաբար փաղաքշում էր գորգի մագնիսական դաշտն իր
կախարդական փերիներով, դարձրի ինձ գլխնիվայր, գլխիս թրջված
մազերը թաթախեցի վառվորուն նյարդապնակիս մեջ, որը վայրկյան առ
վայրկյան հարստանում էր նորանոր նյարդեն նրբին ենթաերանգներով ու
ընդարձակ կտավիս վրա նկարեցի բազմերանգ թափված տերևներ ու
մրջնանոց դարձած կնոջ կուրծք, պտուկի միջից ելնող մրջյուն: Յետո այդ
պատկերն սուծ արեցի ու նույն տեղում հազարավոր գրքերից կազմված
կտավիս վրա
նկարեցի
ծավալուն
ինքնանկար:

Ես հիանում էի:

Ես հիանում էի:

Մինչև ժամը քսաներեքն անց հիսուն:

Ես էլ, ձեզ պես, չգիտեմ երբվանից սկսած,
Սակայն քիչ հետո

Երբ նրանք եկան
Ես մեզալոմանիայի բարձունքներուն էի գտնվում
Ու յուրաքանչյուր այցելուն
Խախտում էր լափրշորեն
Սոտալացած վեհության մոլուցքին
մարգինալ թույլատրելիության սահմանները
Ես խոր հիասթափության էջֆորիայի մեջ էի
Ես հայտնեցի նրանց ու
հայտնում եմ նաև ձեզ
Որ արարելու եմ այնպիսի մի ստեղծագործություն
որը պարադոքսի առաջ կկանգնեցնի –
ինքներդ որոշեք ում.

Արարելու եմ մի գործ, որով կպարզվի, որ իրականում «արվեստ» բառը
առաջացել էր մինչև «արվեստ» երևույթի առաջանալը:

Այսինքն, սկզբուն առաջանում է նշանակիչը, այնուհետև նշանակյալը,
այն էլ՝ հազարամյակներ անց, այն էլ՝ իմ շնորհիվ!

Եվ այդ ասում եմ ես՝ շիզոֆրենիա
ծնած XX դարի ծնունդ,

«XXI դարից ալերգիա»
զանգվածային հիվանդությունն առաջացնող
դարաշրջանի հասուն
ավյունոտ մի պատկեր

Ես նացիստ եմ
Ես ազգությամբ արտիստ եմ

Իմ հանդիսատեսները եկել էին տեսակցության – մի մասը ինձ
Մի մասը՝ ինքնանկարիս, մի խոսքով՝ իրենք իրենց:

Ես նայեցի նրանց վրա
Ինձ զգացի ծուռ հայելիներով պատված սենյակում
Մենակ

Նրանք ամբողջ ժամանակ ինչ-որ բանով գրաղված էին
Ինձ այցելածների հետ ինքս էի շփվում
Բայց ինքնանկարիս այցելուների հետ շփվելու համար,
Ես չեմ ծանածում վիթսարի ինքնանկարս՝
մեծ արագությամբ տեղափոխելով որոշակի գոքեր:
Իմ վիթսարի ինքնանկարը բոլոր հնարավոր տրամադրությունները,
դիրքերը, տարիքները, վիճակները, կոնտեքստները ընդհանրացնող
պատկեր էր:

Կտավն ինքը հրաշալի էր. Ես ստից գոքեր չեմ պահում:

Մի անչափահաս աղջիկ
հրհոցը գլուխն էր օցել
Ես հանգիստ նայում էի նրա
ծայրաստիճան ճկված շուրթերին

Թվաց՝ զուգարանում նայում են ունիտագի մեջ՝ ջուրը քաշելիս
Նրա շատրվանած բուռն լոգերի մեջ
շնչահեղձ եռանդով հասցնում էինք տեսնել
նկարիս բզկտված արտացոլքը
տարօրինակ ուոլիորյան տիրաժավորում
շարունակ CRESCENDO

Ես ավելի ու ավելի ուժեղ էի գիտակցում, որ երբեք անվանումն ու իրը
նույնական լինել չեն կարող, հետևաբար բուն ճշմարտությունը
համենայնդեպս լեզվով արտահայտելի չէ, եթե այն ինքը լեզուն չէ!

Այսօր ամառվա մեջտեղն է

բայց ինչքան ավելի հեռվից նայեի, այնքան ավելի գեղեցիկ էր նա թվում,
ճիշտ ինչպես իմ հեռավոր ապագան:

Ինձ մոտ ամեն ինչ ճիշտ ժամանակին է
Անգամ ուշանալս է ճիշտ ժամանակին

Ես ամեն ինչում ընտրում եմ ընտրության հնարավորությունը

Բայց ես զգում էի՝ ինչպես եմ կորցնում
իմ հավասարակշռությունը,
այնուհետև ձերը,
տարածական կողմնորոշումն,
ժամանակի զգացումն,
ձեր ժամանակի զգացումը,
ես կորցրեցի խղճիս խայթը,
կորցրեցի խայթիս խիղճը,

ինձնից թաքնվեցին հազիս շորերը,
ես կորցրեցի երաժշտական լսողությունս,
Տնից գնալիս մտնում եմ դուրս
Տուն գնալիս մտնում եմ դուրս
ես վշնդեցի համայն տիեզերքում ինձ ամենանվիրված ու ինձ
ամենասիրող էակին,
որովհետև հավատս չեր գալիս...
որովհետև... պետքս էլ չեր:

Որովհետև ես ավելի շատ իմպուլսներ եմ սիրում, քան կանանց –
Պատրաստ եմ զոհաբերել վերջիններին՝
Հանուն Առաջինների!

բոլոր կողմերից ձայներ,
ոչ մի ձայն ոչ մի կողմից
ոչ ձայներ, ոչ կողմեր
Շիզոիդ հուսահատությամբ
ես սկսեցի հաշվել մատներս,
հաշվից ընկա ճագարի բնի մեջ
Սակայն ես քիչ անց զգացի,
որ բոլորովին այլ քան է կատարվում ինձ հետ,
պարզապես ֆրեյմային դատողություն էր...
Ես իրականում զգում էի՝
ճագարի բույնն է իմ միջով ընկնում
ու տեղ չի հասնում

Իր զանգերը զրնզացնելով
Հայկական եկեղեցին
Իր հինգ գմբեթները շխկշխկացնելով
ճանապարհ անցավ

հասավ ինձ,
մի քիչ մլավեց,
իմ միջով ճագարի բնի անկումը
մոմով լուսավորեց ու տեսնելով, որ
վայրէջք երթէ չի սպասվում,
մոմը հանգցրեց,
ճանապարի կտրեց
գնաց հոգևորականների մոտ
վառեց մոմն ու ծնկեց.
մեղքերի թողություն խնդրեց նրանցից:

Ես չեի կարողանում տարբերել տեսածս
չեի էլ կարողանում տարբերել՝ տեսածս է դա, լսածս է դա, ո՞ւր եմ
գաղթում եմ երիտասարդությունիցս,
հակառակի պես գիշեր է սև
օ չեմ կարողանում գլուխ հանել
անհնար է տարբերել.
հարազատ քաղաքս է իր լուսարձակ ուլունքներով կուրացնում,
թե՞ աստղալից երկինքն է իր համաստեղություններով ժրում
բռիս մեջ,
կամ օվկիանոս,
որի մեջ թե՛ քաղաքը,
թե՛ աստղալից տիեզերքը
գտել էին իրենց արտացոլքները,
Եվ ես նիրվանայի մեջ էի...
Ո՞ւր էի հասնում,
Ուր որ քարավանն
Առանց ուղտերի

Բայց դա կարևոր չէ,

ուրեմն,
ի՞նչ եղավ ընկնող ճագարի բնի հետ
կամ ընկնող բնի ճագարի հետ
կամ ընկնող ճագարաբնի հետ
կամ ինչո՞ւ էր ընկնում այդ ամենը
կամ ինչո՞ւ հենց այդ ամենը
կամ
ախր ի՞նչ պատասխան տամ այդ ամենի վերաբերյալ
ի՞նչ սպառիչ պատասխան,
ի՞նչ իմաստ ունի պատասխանն ընդհանուր հաշվով
եթե ինքս մի նշույլ անգամ չեմ հասկանում՝
ինչում է ընդհանրապես կյանքի իմաստը

Կյանքի իմաստը կյանքին իմաստ հաղորդելու եքսպերիմենտների մեջ է
Յուրաքանչյուր պատասխանին հետևում է հռետորական մի հարց.

Հետո՞ ինչ

Քյառափեղ

Գործել հասարակական չարիքներ,
Իրականում չարիքներ են որանք այնքանով,
որքանով ձեռնտու չեն
Օրենք ու կարգ հաստատողների ու վերահսկողների համար:

Օ դատարկաբանություն
Համենայնդեպս պետք է լինել հանդուրժողական.
Վերջապես անբարոյականությունն է
և ոչ բարոյականությունը
մարդու բուն բնութագիրը

բարոյականությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ
մարդկային կեղծավորության բարձրագույն դրսևորում

օգտաբեր թե պարզապես անհրաժեշտ,
այնուամենայնիվ – կեղծավորության –

գոնե գիտակցել

Լավ, ովքեր դեռ չեն գիտակցել, չխանգարենք:
Մնացածները, գնանք
Ի՞նչեր եմ ցույց տալու
Տեսեք,
Կառչեք
Պահից

Աչքերը թարթելիս նա անցնում էր լուսնի բոլոր ֆազերը
Տեղատվությունն ու մակընթացությունն իմ ներսում
իրար տվին: Նա ինձ հպվեց
ճիշտ ժամանակին
ճիշտ կետիս –
մազերը տոտալ փշաքաղանքից
ցցվել էին Նյու Յորքի երկնաքերների պես
Ողջ նախանձելի մարմնովս մեկ

Նա անշտապ լիզում էր լեզվաքերներս:

Իսկ ես հետևից սափրում:

Եվ ի՞նչ եք կարծում՝

Ինչո՞ւ ստեղծագործել

Անձամբ ինձ համար այդ հարցն այլևս կորցրել է
իր երբեմնի ակտուալությունը.
ստեղծագործելն ինձ համար
նույնքան բնական ու անպայման պահանջ է,
որքան միզելն ու կոկոլը

օրական այնքան բառ ու տեսարան ու գաղափար եմ խժում, կուլ տալիս,
որ վազում եմ իմ ստեղծագործական զուգարանն ու
նստում իմ ունիտագ-համակարգչի առջև ու սկսում
ամենաէսթետիկական
ամենախմաստուն
ամենաանհեթեթ
արտաթորումը!

Չեզ անհայտ մի ձեռք հասցեագրել ուղարկել էր
այս Ստեղծագործությանը – ցպահանջ,
ինչպես ինքներդ կարող եք վստահանալ
ձեզ ստեղծագործությունն արդեն ստացել է,
կարդում է,
պատասխան է գրել – vide supra

ՊՈԵՏԻ ԿԱՐԴԻՈԳՐԱՄՄԱՆ

Պոետիա լեղապատառ կվազե՞ք Պոետիայի ամենավերևի տողից կքցվե՞ք
Պոետիա կսրսկվե՞ք Պոետիա կլափե՞ք Պոետիա կշռե՞ք Պոետիա կկռվե՞ք
Պոետիա կծակվե՞ք Պոետիա կբնբնլե՞ք Պոետիա կպաչվե՞ք Պոետիա
կհեղափոխե՞ք Պոետիա կմերկանա՞ք Պոետիա ոռնա՛ ոռնա՛ Պոետիա
ծիծաղի՛ Պոետիային քունեք կընգնեք Ես ընգել եմ Պոետիա հռհռա՛
Պոետիա կզնդակահարե՞ք Պոետիա կբարձրանա՞ք Պոետիա կաղաչե՞ք
Արվեստը բարձր է սիրուց Մեծ է սիրուց Արվեստը մեջս անգամ տեղ չարեց
Ես բավական չեմ միջիցս թափվում է ցայտում Պոետիա Պոետիայի
անհամար թշերը կչափալախե՞ք Պոետիա կղժժժա՞ք Պոետիա կճվճվա՞ք
Պոետիա կշորթե՞ք Պոետիա բառաչելով կմորթե՞ք Պոետիա կհաչա՞ք
Պոետիա քսի կտա՞ք Պոետիա արածողների վրա Պոետիա կքաքե՞ք
Պոետիա կկակազե՞ք Պոետիա տնքա՛ Պոետիա կսանրե՞ք Պոետիա
կգողանա՞ք Պոետիա կաճացնե՞ք Պոետիա կհանդիպե՞ք Պոետիա կզոդե՞ք
(Արվեստ+Փիլիսոփայություն+Գիտություն+
+Քաղաքականություններ+Սպորտ+Բիզնես+c+++etc)՞–Պոետիա=Պոետիա
Արվեստը սիրուց դիմացկուն է սիրուց գեղեցիկ Պոետիա Պոետիաքամ եմ
լինում Պոետիա կկախարդե՞ք Պոետիա կջրիկանա՞ք Պոետիային կգրգռե՞ք
Պոետիա կզոհաբերե՞ք Պոետիա կասֆալտապատե՞ք Պոետիա
կբետոնապատե՞ք Պոետիա կստրկացնե՞ք Պոետիա կթռցնե՞ք Պոետիա
կկզցնե՞ք POP-Պոետիա շնանալ կլրով & շնանալ պոետիայով Պոետիա՛
հե՛նց հիմա՛ Պոետիա հե՛նց հիմա՛ Պոետիան մարգարեւության համար
նույնն է ինչ կուռքը ճշմարտության Պոետիայի հետ հարբե՛նք Պոետիա
շտապե՛նք Պոետիային կվախցնե՞ք Ռանդեվու Պոետիայի մեջ Պոետիա

կճանաչե՞ք Պոեզիայի մեջ կթափե՞ք տեխնոկրատ Պոեզիա Պոեզիան
կբռնաբարի Պոեզիան կթքի՝ Պոեզիա կականազերծե՞ք Պոեզիա
կժպտա՞ք Պոեզիա կպարե՞ք Պոեզիային կնախանձե՞ք Պոեզիայից
հայտնի կլինե՞ք Պոեզիա կվիրահատե՞ք Պոեզիա Պոեզիա կխորխե՞ք
Պոեզիա կքոքե՞ք Պոեզիային պոզեր կդնե՞ք Պոեզիա կբխկա՞ք Պոեզիա
կմաշկե՞ք Պոեզիա ժաժ կտա՞ք Պոեզիա կկլպե՞ք Պոեզիա կբուժե՞ք
Պոեզիա կսխկե՞ք Պոեզիա կկրտե՞ք Պոեզիա կայլասերե՞ք Պոեզիա
կգրե՞ք Նորածին Պոեզիայի ոռը կսրբե՞ք Պոեզիա եմ լարում Պոեզիա-
կամիկաձեի լեզուն ատամներովս դակած սուրում եմ պատրաստ ամեն
ինչի ուր ել տանի Պոեզիայի սանրվածքը խառնեք ուղարկե՞ք
հեղափոխության Պոեզիային փաթաթեք թևներիդ չափե՞ք ձեր սրտի
ճնշումը Պոեզիայի հետ TV նայեք ձեր հոգու արվարձաններն ու
գետտոները Պոեզիային հանվացրեք ու մեջը դրեք Պոեզիա
կիրականացնե՞ք Պոեզիայից երեխա կուզենա՞ք Պոեզիա կարգելե՞ք
Պոեզիա կջնջիսե՞ք Պոեզիա կծաղրե՞ք կկանչե՞ք դուելի Երգի
Պոեզիային կզինակցե՞ք Պոեզիային սահմանում կտա՞ք Պոեզիա
կխլացնե՞ք Պոեզիա կկուրացցնե՞ք Պոեզիա կլոե՞ք Պոետիկ կմահանա՞ք
Պոետիկ կանմահանա՞ք Պոեզիա կքաղաքականացնե՞ք Պոեզիան
սեպտեմբերի 11 կանե՞ք Պոեզիան մեծահոգի՛ է Պոեզիա կհարցնե՞ք
Պոեզիա կհոհուա՞ք Պոեզիային բոզի կտանե՞ք Պոեզիային կհասցնե՞ք
ինքնասպանության Պոեզիան տեղ կհասցնե՞ք Պոեզիա կգժվե՞ք
Պոեզիաքամ եմ լինում Պոեզիա կկլոնավորե՞ք Պոեզիա կխելագարվե՞ք
Պոեզիա կգժվե՞ք Պոեզիա կցնդվեք Պոեզիա կհարբե՞ք Պոեզիա
կդավաճանե՞ք Պոեզիայով մեկ կզբոսնե՞ք Պոեզիա կթաքցնե՞ք
Պոեզիայից կամաչե՞ք Պոեզիա կքոքսե՞ք Պոեզիան խցկե՞ք իմ կորած սև

կատվի ուի ծակն ու ջերմաստիճանն ինձ հաղորդեք Պոեզիա կխոսցնե՞ք
Պոեզիայի համար կնստե՞ք Պոեզիա կխլնքոտե՞ք Պոեզիայի աչքերը չես
փակի Պոեզիա կշշմցնե՞ք Պոեզիա կզոյատևե՞ք Պոեզիան պետքներդ ա՞
Պոեզիայով կգրոհե՞ք **Երգի** Պոեզիային 39 անգամ կդադե՞ք Պոեզիա
կդավանե՞ք Պոեզիան ձեր բանկային հաշվի մեջ կդնե՞ք Պոեզիա կթսե՞ք
Պոեզիան մեծահոգի է Պոեզիա կտռե՞ք Պոեզիա կկոխոցե՞ք
Պոեզիաբուրգեր կխժռե՞ք Պոեզիա կսոսնձե՞ք Պոեզիա կցռե՞ք Պոեզիայի
վրա Պոեզիա *հա-ից* ու *չէ-ից* անդին Պոեզիա կպլստա՞ք Պոեզիա կքորե՞ք
Պոեզիա կտիրաժավորե՞ք Պոեզիա կտիրաժավորե՞ք Պոեզիա
կտիրաժավորե՞ք Պոեզիա կտապակե՞ք Պոեզիա կգլորե՞ք Խարված
ամուսինները պոզահարում են Պոեզիա Պոեզիա կցուցադրե՞ք Պոեզիա
կպրոլետարացնե՞ք Իսկ դուք կկարենայի՞ք Իսկ դո՞ւք Իսկ դո՞ւք Իսկ
դո՞ւք Իսկ դո՞ւք իսկ իսկ իսկ Պոեզիա Սպասելիս Իսկ դո՞ւք Իսկ դո՞ւք Իսկ
դո՞ւք Poetry – Be the First to Know Արվեստը բարձր է Սիրուց հասուն
որոնումների Պոեզիա Պոեզիա կնկարահանե՞ք Պոեզիա կփախնե՞ք
Պոեզիայի շուրջ 80 օրում կանցնե՞ք Պոեզիա կխանդե՞ք Պոեզիա
տոնե!!!նք Պոեզիա կմթնե՞ք Պոեզիա կմիացնե՞ս Պոեզիա կմրցե՞ք
Պոեզիա կխռմփացնե՞ք Պոեզիա կկատակե՞ք 1000 ու մեկ Պոեզիա
Պոեզիայի 40 օրը Պոեզիա 49 100 տարվա Պոեզիա Երեք Պոեզիա Ալի
Բաբան և 40 Պոեզիաները X Պոեզիա/Պոեզիա Պոեզիա
կաստվածացնե՞ք Այսպես խոսեց Պոեզիան Պոեզիա կփաղաքշե՞ք
կփղանա՞ք Պոեզիայի դեմ կընդվզե՞ք Մեր պատկերովը եւ մեր
նմանութեան պէս պոեզիա շինենք որ իշխեն ծովի ծկների եւ երկնքի
թռչունների եւ անասունների եւ բոլոր երկրի վերայ եւ երկրի վերայ
սողացող բոլոր սողունների վերայ եւ բոլոր ժանտ

հանցագործությունների վերայ Պոեզիա կվերափոխե՞ք Պոեզիա
կգահազրկե՞ք Պոեզիա կսոցիալիզացնե՞ք Պոեզիային կվարակե՞ք
ձեզնով **Երջի** Պոեզիա Պրոտեստ Պոեզիա Բողոք Պոեզիա ճահիճ
Պոեզիա Պրոտեստ Պոեզիան 23 տարեկան է Պոեզիային լեզու կիանե՞ք
Պոեզիան ձեր աչքի առջև է Պոեզիան լսիտացիայից կիանե՞ք Պոեզիա
փշաքաղվե՞ք Պոեզիա կթրաշե՞ք Պոեզիաթափ Պոեզիացան
Պոեզիահավաք 40 օրուգիշեր 20 000 լր Պոեզիայի տակ պատրա՞ստ եք
խեղդվել Պոեզիան տիղմից դուրս կքաշե՞ք քաշեք և դուք կազատվեք
վայ մերը քունեմ ոնց որ Պոեզիայի վկա լինեմ էպիդեմիա աղանդավոր
Պոեզիայի վարակ Պոեզիա ամենուր եւ Աստուած կատարեց եօթներորդ
օրուն իր Պոեզիան որ արավ եւ եօթներորդ օրը մեռավ իր բոլոր
գործքիցը որ արավ ճշմարի ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ եթե
Աստուած ձեր մեջ ընկնելով չմեռնի ինքը մինակ կ'մնայ բայց եթե մեռնի
շատ պտուղ կ'բերէ Պոեզիա կմահապատժե՞ք Աշխարհը մէ Պոեզիա է
Poesium Mobile! Ագիտպոեզիա Պոեզիա Պոռնո Աստղ Պոեզիա Ռոք Աստղ
Պոեզիա Փոփ Աստղ Պոեզիա Պագոնի Աստղ Պոեզիա կխայտառակե՞ք
Պոեզիա կթռչկոտե՞ք Պոեզիա կպազե՞ք Պոեզիա կավլե՞ք Պոեզիա
կմլավե՞ք իմ կատվի նման կլիզե՞ք Պոեզիա Դուն Կրակ Ճագածդ Կրակ
Դուն Կրակ Ճագածդ հագածդ սև Պոեզիա կմոթմոթա՞ք Պոեզիա.ehe
Պոեզիա կմրափե՞ք Պոեզիա կպորտապարե՞ք Պոեզիա Պոեզիա Պոեզիա
առւ Պոեզիա հեհեհեհեյ Պոեզիա կփնտրե՞ք Պոեզիա
կռազմականացնե՞ք Պոեզիա կդիսկրիմինացնե՞ք Պոեզիա կռմբակոժե՞ք
Պոեզիա կարթնանա՞ս Պոեզիա կքնե՞ս Բարի քուն քեզ Անցանք առաջ
Պոեզիա կերկրպազե՞ք Պոեզիա կշվցնե՞ք Պոեզիա ստե Պոեզիա ընդե
Պոեզիա.swf Պոեզիա ամենուր Պոեզիա կցլցլա՞ք Պոեզիա կռենտզենե՞ք

Ձեր փրթված երակներից Պոեզիաներ կցայտե՞ն Պոեզիա կաթաց
գրգռված օրգաններից Պոեզիա կչիշիկացնե՞ք Պոեզիան բուռղ տա՞
Պոեզիա կկախվե՞ք Պոեզիան բուռղ տա՞ Պոեզիա կմեկնե՞ք Պոեզիա.jpg
Պոեզիա.html Պոեզիան բուռներդ տա՞ Պոեզիայի ֆազգերը քցեց
Պոեզիան վարարեց դողդողաց Պոեզիան դորդաց Պոեզիան չի հոգնում
Պոեզիա կսլանա՞ք Լույսի հետևից կիասցնի ու կգերազանցի միայն
Պոեզիան բացում է թե լույսի թե մթան արագություն չունի դրանցից ոչ
մեկի կարիքը Պոեզիայից կխռովե՞ք Պոեզիա կընկերանա՞ք Պոեզիան
կներծծի ձեր դաշտանը O *Let's make things better* **Poesia** Պոեզիա
գրքից անդին կնախաճաշե՞ք Պոեզիա կդաստիարակե՞ք Պոեզիա
պատանդ կվերցնե՞ք Պոեզիա կոնտրես Պոեզիա էքստազ էքստրեմիզմ
Պոեզիայի դեմ կոնտրկուլտուրա ուտոպիա փախուստ դեպի Պոեզիա
խոսքի հայրենիք անարխիա կոնտրէքստազ կոնտրպոեզիա
կոնտրուտոպիա կոնտրնրանք կոտրտանք կոտրտանք կոտրտանք
անտիպետություն անտիֆրիզ անտիմարդ հասարակություն Պոեզիան
ձեր բուռղ տա՞ Մեռի Պոեզիան ձեր բուռղ տա՞ Մեռի Պոեզիան ձեր բուռղ
կտա Մեռի Մեռի Մեռի հա հա հա անտիգալակտիկա հակամահ-
իակալյանք կախարդանք փրկություն բունտ Փրկիչ Պոեզիա Պոեզիա
Պոեզիա մինչև վերջ Պոեզիա Պոեզիա մինչև հերթական սկիզբ Պոեզիա
Պոեզիա մինչև հերթական վերջ անելանելիություն սկզբից ու վերջից
անդին բան չկա՞ Պոեզիա Պոեզիա Պոեզիա կա **Պոեզիա ≠ Պոեզիա**
կան Պոեզիայի հարսնյակ պոետներ կան Պոեզիայի պարկուճ պոետներ
ես Պոեզիայի սիգնալիզացիան եմ Պոեզիայի նկատմամբ բացառվում է
ցանկացած Օքսիմորոն կան մի քանի օքսիմորոններ Պոեզիայի
կապակցությամբ օրինակ **Անախրոնիկ Պոեզիա Անատոպիկ Պոեզիա**

անաանտրոպիկ Պոեզիա և Օքսիմորոններ Պոեզիայի կապակցությամբ
Ղարսի խորոված խժոռող վրայից Կոկա Կոլա խմող ապահովիչի դերում
գույնօգույն ացերի մեջ խցկվող Պոեզիա Պոեզիան գոյության
զոհաբերություն է բարին գոյություն ֆիքսող այդ տարրին Պոեզիան
ավելին է քան բառը և դա է Պոեզիա գրելու հնարավորության
գրավականը Պսիխոֆարմացևտիկ արդյունաբերության
ֆարմակոլոգիական թունաքիմիկատային զրթուզիբիլային Պոեզիա Իմ
911-ը Պոեզիան է Պոեզիա կահազանգե՞ք Պոեզիա նյու կլուսանկարե՞ք
Պոեզիա.doc Պոեզիա ատրճանակի փողի տակ Պոեզիա ճռցրած կա՞ք
ROAD 66-ի վրա Պոեզիային կբանտարկե՞ք ու ոռից կքունե՞ք Պոեզիա
խաղ Պոեզիա ուրիշ **ուրիշ ուրիշ** Պոեզիա Պոեզիային չեք շրջափակի
Պոեզիային պոզեր դնելն անհնար է Պոեզիան ամեն ինչ ու ամեն ուր է
Պոեզիան ամենուր է կիասնե՞ք հետևից Պոեզիային չեք հասնի չեք անցնի
Պոեզիան ամենուր է Երկիր մոլորակը բոլոր գալակտիկաների
ամենապոետիկ մոլորակն է տոներով պոեզիայով սեքսով պոետիկ պոռնո
սայթերով պոետիկ բիզնեսով պոետիկ համաշխարհային պատմությամբ
ու հատկապես պատերազմներով սովերով գժոտ
տոնակատարություններով ծեծկոտուքներով դիսկոտեկներով քեֆերով
օրգիաներով մեզնով պոետիկ համակենտրոնացման ճամբարներով
Երկրի Երկու կիսագնդերը հիշեցնող աչքերով ու ձեռքի ափերով
ուղեղներով ու թոքերով ոռերով ու ձվերով ու կավիտացիայի չենթարկվող
պոետիկ ծծերով պոետիկ հեղափոխություններով մահացու պոետիկ
ձախողումներով ու դեպրեսիաներով աղերսներով ու ողբերով պոետիկ
հառաչներով ու խլացուցիչ գոռգոռոցներով ու պոետիկ
ցեղասպանություններով Պոետիկ դոլարներով Պոետիկ սերերով ու

ատելություններով Բալիստիկ Պոեզիայով Պոեզիայի էպիդեմիա մոտս Պոեզիախատի վերջին փուլ Անբուժելի Պոեզիախատ Պոեզիաքամ եմ լինում Պոեզիա Պոեզիա Պոեզիա լիքը լիքը Պոեզիա Հայրական ճակատի միքանի տող պոեզիայի տաժանակիր վերծանուն մանկուց մինչ-և հետհայելային փուլ կոտորվում եմ մաս-մաս ինձ գգում եմ մասնատված այնքան մասերի որքան տարանջատված բառ կա այս աշխարհում չէ ինձ անդրադարձնող հայելին է փշրվում երբ Պոեզիան կատաղած շպրտեցի վրան Պոեզիա կփոխարինե՞ք Պոեզիան էլ հետն էր փշրվել ու իհնա հապշտապ իրար եմ կցել կոլաժավորել իրար ինչ քիչ թե շատ պահպանվել էր բունտի հետևանքով երբ հայելու մեջ Աստծո պատկերն ընկավ աչքիս Պոեզիա կարա՞ք Իմ ազգանվան պատմությունը սերում է ամենապոետիկ մոլորակի ամենապոետիկ ցեղասպանություններից մեկից Պոեզիային մինետ կանե՞ք Պոեզիայի տրաֆիկինդ գովազդների միջոցով Պոեզիա կփորե՞ք Պոեզիա կքրտնե՞ք Պոեզիա կջղայնանա՞ք Պոեզիա կքրֆե՞ք Պոեզիա կթունավորե՞ք Պոեզիա կեռացնե՞ք Պոեզիա կմրսե՞ք Պոեզիա կլսե՞ք Պոեզիա կգմփցնե՞ք կպայթցնե՞ք պոեզիա կտրաքցընե՞ք կտեղադրե՞ք պառլամենտի շենքի տակ Պոեզիա կսպանե՞ք ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ եթե Պոեզիան ձեր մեջ ընկնելով չմեռնի ինքը մինակ կ'մնայ բայց եթե մեռնի շատ պտուղ կ'բերէ շատ ցասում կ'բերէ շատ գժություն կ'բերէ ինձ շատ հունից կ'հանէ ինձ կ'կատաղեցնէ ինձ կ'պայթեցնէ Պոեզիա ինձ կ'փսխեցնէ՛ Պոեզիա սիկտի՛ Պոեզիա ներիր ինձ բայց եթե չվռնդեմ քեզ միջիցս կդառնամ պոեզիայի ամենաընդարձակ գերեզմանոցը այնուամենայնիվ կամքիցս վեր է Արվեստն ամենապտղատու դիակն է Պոեզիան տեղ չի թողնում իրեն հակադրվելու Բողոք ընդդեմ Պոեզիայի Աբսուրդ Պոեզիա քունիր թողիր

Պոեզիան ինձ հանգիստ չի թողնում և ես ազատում եմ Պոեզիային իրեն
տանջող կլաուստրոֆոբիայից բայց օգուտ չունի իմ Պոեզիան
տառապում է կլաուստրոֆոբիայով ուր էլ լինի նա դուրսը թե ներսը այս
բառերի մեջ թե անդին ձեր մեջ թե նրանց մեջ Ամբողջ Արվեստը
Արվեստագետի պատկերացումն է մահվան մասին Պոեզիայի
տոտալությունը մահ է Պոեզիայի մահ ախր չէ՞ որ որևէ երևոյթի
համատարած տոտալությունը ենթադրում է նույն այդ երևոյթի
ինքնության տարրալուծում անհետ կորուստ և իմ դաժան փորձերը նրան
որևէ կերպ սահմանում տալ հունից հանում են նրան կատաղեցնում ու ես
դրանից դրանից փախխիսած կայֆ եմ բռնում այդ սադոմազոխիզմից
գիտակցելով որ իսկական ՊՈԵՏԻ ԽԵՌԸ ԳՐԱՎԻՏԱՑԻԱՅԻ ՉԻ
ԵՆԹԱՐԿՎՈՒՄ Եղեք Ռեալիստ Պահանջեք Անհնարինը Պահանջեք
Պոեզիա Ես նույնքան անհնարին եմ որքան Պոեզիան Պոեզիան է ինձ
ընտրել և ոչ հակառակը Պոեզիան էլ ինձ գոքի պես կվերջացնի ինձ և դա
կլինի Պոեզիայի ինքնասպանությունը Պատանեկան էքստազների մեջ
երբ ինձ խենթացնում էր 60-ականներից 90-ականները պատմության
ժայթքող մաշկին դաշված Հակաադունյան էքստազամետ
երաժշտությունն ու Պոեզիա աբորտ կանե՞ք ու պերֆորմանսն ու
հեկունինգը մոռացա ինչ-որ սիրածս ու չսիրածս սպեցէֆեկտներն ու
հետմահու սեքս թե էսթետիկական կատակլիզմների բուժիչ
հատկությունները գիտատեխնիկական նվաճումներ որոնք կստեղծեին
ինչ-որ խարկանքներ ու իբր վերջնականապես կփակեն
երիտասարդության հեղափոխական ռեխը խառնվել Երգի խճճվել
կորցնել սեփական մազերի հաշիվը Պոեզիային գիշերը հեքիաթ
կկարդա՞ք դինոզավրների մասին Պոեզիան կփոխե՞ք հայրենիքի հետ

Պոեզիան կփոխե՞ք փողի հետ Այս նույն հարցերը կուղղե՞ք Պոեզիային
ձեր անունից Պոեզիան չափման միավոր է որով կարելի է չափել
Արտիստի դժբախտության ու ներքին անտագոնիզմի անհաղթահարելի
անելանելիության ու անչափ երջանկության ծավալը հետևյալ
բանաձևով պոեզիա–պոեզիա=պոեզիա Չվախենալ Պոեզիայից ուրեմն
Չվախենալ Մահից ինչ երևակայելի է այն իրազործելի է Պոեզիա Հենց
մարդկությունը ոչնչացնի Պոեզիան մարդկությունը կթևակոխի հավերժ
խաղաղության շրջան և այդ ժամանակ նրան պատերազմներ պետք չեն
լինի պետք չեն լինի բանակներ ռազմական նավեր մարտական
ինքնաթիռներ ու թունավոր նյութեր Այդ ժամանակ մարդկությունն արդեն
հավիտյանս հավիտենից չի տեսնի պատերազմ չի տեսնի և սեփական
արտացոլքը հայելու մեջ

ԵՍ ԼՈՒՄ ԵՄ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՐԲ ԼՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՏ Է ԸՆԴՊԵՄ ԽՈՍՔԻ



Կարեն Դարսյանը ծնվել է 1979 թ.-ի հունիսի 30-ին Երևանում։ Տպագրել է գեղարվեստական հատվածներ և գիտական հոդվածներ համապատասխան հանդեսներում։ Ներկայումս Երևանի Պետական Լեզվաբանական Համալսարանի ասպիրանտուրայում ուսումնասիրում է արտասահմանյան, մասնավորապես անգլ-ամերիկյան գրականություն և պոստմոդեռնիստական փիլիսոփայություն։ Դասախոսում է Լեզվաբանական և Ալավորական հանալսարաններում։